

575.4

35-63

5693



5

~~056 29/11/10~~

2010

4v

530
153-ԵՐ

Հ. ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆ

575.4
36-63

ՏԱՐՎԻՆԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ

Կ Ա Մ

ՏԵՍԱԿԱՑ ԵՒ ՄԱՐԴՈՒՍ ԾԱԳՄԱՆ

Խ Ն Դ Ի Բ Ը

1002
9773

ԶԻՆԱ ԱՍՈՑ' ԵՒ ԵՂԵՆ,
ՀՐԱՄՈՑՆԵԱՑ' ԵՒ ՀԱՍՏԱ-
ՏԵՑԱՆ:
Ս... Դ... ԶԻԸ. 5.



2002

ՄԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Ս . Ղ Ա Ջ Ա Ր . — Վ Ե Ն Ե Տ Ի Կ

1898

15317

Ա. Զ. Դ.

ՀԱՆՆԱԼ Ի ԲԱՌԱՐԱՆԷ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ.

ՍՈՅՆ աշխատութեանս նպատակն է ցուցընել թէ Տարվինականութիւնը կամ Յեղաշրջականաց վարդապետութիւնը ոչ թէ Հաստատեալ և ապացուցեալ իրողութիւն մ'է, այլ ենթադրութիւն, որուն վկայ են նոյն իսկ ամենէն հռչակաւոր եւանդուն տարվինականք, զոր օրինակ Գանեստրինի. « Սա այժմ կարելի չէ, կ'ըսէ, հաստատել որ յեղաշրջունը կամ տարվինականութիւնը յաղթանակած ըլլայ, վասն զի տակաշին եւրադրութիւն մ'է » . (G. Canestrini *Per l'evoluzione. Recensioni e nuovi studi.* Թուրին 1894 երես 203). Իսկ Մալեշօթ կ'ըսէ՝ թէ « Տարվինի աշխարհագրութիւնը ազնիւ գտնուեցաւ քան թէ իրողութիւնք » (J. Moleschott *Carlo Roberto Darwin* Թուրին Loescher 1882): Ահաւասիկ տարվինականք իրենց բերնով թիկունք կ'ըլլան մեզ ցուցընելու, թէ Տարվինականութիւնը չէ իրողութիւն՝ այլ ենթադրութիւն: Ուստի ի՞նչպէս արդի ազգային տարվինականք՝ ուսման կ'ուզեն համոզել իրրե թէ այդ ապացուցեալ ճշմարտութիւն մ'ըլլայ, որ դեռ շատ հեռու է:

ՏԱՐՎԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կ Ա Մ

Տ Ե Ս Ս Կ Ա Ց Ե Ի Մ Ա Ր Դ ՈՒ Ս

Ե Ա Գ Մ Ա Ն Խ Ն Դ Ի Ր Ը

Ա.

ԲԱՐՆՇՐՋՈՒՄՆ. évolution. — Այս նոր վարդապետութիւնն ունի զանազան անուններ, ինչպէս Darwinisme Տարվինականութիւն, Տարվին անգլիացւոյն անուամբ, որ զայդ առանձին գրութեան վերածեց. — Transformisme ցեղաշրջումն, Sélection naturelle բնական ընտրութիւն, Génération spontanée ինքնակ ծնունդ. այս ամէն վարդապետութիւնները կրնամք թաւելալ ման կամ Տարվինական գրութեան դասակարգին մէջ զնել:

Եթէ բացատրենք տարվինական գրութիւնը, և ապա ցուցնենք անոր անտեղութիւնը և նախաութիւնը, բացատրած և ներքած կը նամարիմք փոքր ի շատէ անոր դասակարգէն զանուոյ ամենայն գրութիւնքը, որը աշխարհիս ծագումը, տեսակաց բազմութիւնը կը շնան բացատրել մոլար կերպով նախառակ Մովսիսական պատմութեան, և նոյն իսկ բնական խելքի:

Լամարք, Ռոպինէ, Լամէրի և Տարվին և ոչ սակաւք, նամարեցան թէ ի սկզբանէ աշխարհի միայն անկերպարան նիւթ մը կայ կոյր և անկենդան, որ և կենսատու եղաւ ամենայն կենդանեաց. և Տը-Լամէրի նեռեալ վճիռը տուաւ. « Երկիրս հղաւ առաջին արգանդ մարդոյ ».— Իսկ Ռոպինէ. « Իւրաց ամենայն տեսակքն կը ցուցնեն

ընութեան ջանքը և փորձը զմարդ ծնացրնելու »: Իսկ թէ ինչպէս այս կոյր և մեռեալ նիւթն կրցեր է այնքան զանազան տեսակ կենդանիներ յառաջ բերել, ամէնքն ալ նախահիմն կը զնեն այս վարդապետութեան, թէ այդ կոյր և անկենդան նիւթն ղիպուածով կամաց կամաց զարգացաւ ինքն իրեն, և յետ կազմելու այլ և այլ տեսակներ կենդանեաց, այս զարգացումը նաև ի մարդն, որ է նիւթ բանական. և բուն այս գրութիւնը Տարվինականութիւն կոչուած է: Սակայն ամէնքն ալ ոչ նոյն կերպով կը բացատրեն զայն:

Ա. Լամարք նիւթոյ այս զարգացումը Դրութիւնն հանգամանաց կոչուածով բացատրեց այսպէս. « Տեսակները այսպէս կը բազմանան. կենդանիք այլ և այլ վիճակաց մէջ գտնուեցան, որով այլ և այլ պիտոյք ունեցան, և զանազան յօծարութիւնք. այս զանազան յօծարութեանց զօրութեամբն ապա ստացան զանազան կարողութիւններ, և այս կարողութիւնքն ալ իրենց յարմար գործարաններ կազմեցին, և ըստ զանազանութեան այդ կարողութեանց և գործարանաց, տեսակները բազմացան: Չոր օրինակ կենդանւոյն մարմնոյն մէջ ճանկերը խոթելու սովորութիւնն՝ զայն պատառելու նամար, յառաջ բերաւ մտակեր չորբոտանիները՝ և ասոնց խոշոր եզունդներ տուաւ. սոյնպէս խուրճն նոյն առաջին սկզբնական կենդանի տեսակէն յառաջ եկած է, և ոչ

բովհեան հողի սակ ապրելու սովորութիւն ըրած է, և այդ պարագայից մէջ աչաց պէտք չունի, որով աչազուրկ (չառ հին կարծիք մ'է խուրդի կոյր ըլլալն, ունի աչք, բայց փոքր ըլլալով՝ անտեսանելի են) կենդանեաց տեսել մ'է: Անոր հա՛մար այդ բացատրութիւնն՝ Դորովիւմ համա՝ զամամաց ըստած է:

Բ. Տարվին որչափ ալ Լամարքի վարդապետութեան հասարակաց հիմն ընդունեցաւ, բայց փոխանակ անոր պէս բացատրելու զայն, հետեւեալ կերպով բացատրեց, և զայն անուանեց Բնական ըմտրութիւմ *Sélection naturelle*, այսինքն: Որ և է կենդանի անհատին մէջ բնածին յարմարութիւն մը կայ, և այսու ինքնաբերաբար նոյն անհատին մէջ կը հաւաքուին պահպանողական և կատարելագործիչ պատահական իրեր, և այդ իրք ծննդեամբ կ'անցնին ի սերունդս, և ժամանակով կ'աճին յաշրջաբար ծնած անհատից մէջ, և այսպէս կենդանեաց նոր տեսակներ յառաջ կու գան:

Ուստի մարդս նախնական կենդանի մ'է, որ յաշրջակայ քմակամ ըմտրութեամբ հասաւ ի տեսակն Օրանութեան, որ իբր անմիջական սերող պէտք է համարուի բանական մարդոյ:

Ամենայն հետեւողք մի և նոյն վարդապետութեան այս կրկին բացատրութեանց, աշխարհիս ծագումը, բազմաթիւ տեսակաց յառաջ դարը, բանական մարդոյ սկիզբը, և այլն, կը շնանս մեկնել այս դրութեանց ձեռքով, և կ'ուզեն ընդունել ընդ ամենուն իրենց այդ մուրաբ և խելքի հակառակ կարծիքը՝ իբր թէ անկենդան, անբան և կոյր նիւթոյն ինքնաբերաբար և պատահական զարգացմամբ, յառաջ եկեր են զգայական, բանական և կենսունակ էակներ:

Իսկ արդի բնագէտք և բնագաղտուք՝ սոյն այս վարդապետութեան կրկին բացատրութիւնը զանազան և նորազեւտ կերպարանաց ներքոյ կը ներկայացնեն, իբր թէ գրեթէ տարբեր բացատրութիւնք ըլլան իրենց կարծիքը. սակայն հին նիւթագաշտից մուրաբ կարծիքներէն կէտաջափ մի չեն զանազանուիր, բայց կէտ նորակերպ նորաբանին ունեցով. և ամեն ալ կը յանդին մեր այս բացատրած կէտերուն մէջ, որոց գլխաւոր շանքն է դնել սողմն (embyon) ի գծրութեան, որ կամաց կամաց ինքնաբերաբար կը զարգանայ: Ուստի սողուոյս անձկութեան պատճառաւ, զանց կ'ընեմք յիշատակել ի նոյն յանդող բացատրութիւնը, և կը շատանամք միայն մեր հետեւեալ հերքման փաստերուն մէջ յիշատակել և հերքել նոյն իսկ ամենէն նոր կարծեաց փաստերը և բացատրութիւնը: Այլ յառաջագոյն հարկ կը համարենք նշանակել, որ Տարվինականութեան չատագովք նման թուոյնոց՝ ճիւղէ ի ճիւղ կը ցատքեն միշտ տարբեր կերպարանք տալով իրենց

զրութեան, փախուսանք կու տան, որով անհնարին է իրենց ամենայն բացատրութեանց հառեւն ընթանալ, քանի որ իրենք իսկ միանգամ ըսածին՝ երկրորդ անգամուն կը փոխեն, որով զարմանք չէ՝ եթէ ներկայ տեսութիւն մէջ գոյնք պակի ինչ, թէ պէտ շանացեր ենք ամենէն նոր քննութիւնները մէջ բերել: Այս ամենայն կարծեաց անհիմն և անտեղի ըլլալն միանգամայն՝ համառօտիւ կը տեսնուի հետեւեալ սողորով:

Ա. Լամարք կ'ըսէ թէ արտաքին պարագայք յառաջ կը բերեն ամկնոզամ ընթոյ պիտոյքը, յօծարութիւնը, կարողութիւնը և գործարանքը, և այլն: Սակայն, ուղիղ տրամաբանութիւնը սլայծառ կը ցոյցընէ, որ միայն կենդանի նիւթը ընդունակ է այդ յօծարութեանց, կարողութեանց, և այլն: Ուստի Լամարք ինքնիրեն կը հակառակ, վասն զի անկենդան նիւթ կը դնէ, ապա անոր յօծարութիւններ, կարողութիւններ, և այլն, տալով, նոյն նիւթը միանգամայն անկենդան և կենդանի կը համարի, որ հակասական է:

Բ. Եթէ Լամարք և եթէ Տարվին ի սկզբան կը դնեն սկզբմական ընթացք մը՝ որ իբր մէջ կը բովանդակէ կենաց ամենայն աստիճանները, և այդ աստիճանք վարդի թերթից պէս կը բացուին, կը զարգանան, կամ զիպուսածով, ըստ Լամարքի բացատրութեան պարագայից պատճառաւ՝ յորս այն նիւթը կը գտնուի, կամ ըստ Տարվինի՝ ընկամ ըմտրութեամբ: Արդ կը հարցընեն՝ նեմք այդ մեծ բնագաղտուիներուն, ինչպէս կ'ապացուցանէք թէ կար այդպիսի սկզբնական նիւթ մը՝ բովանդակող կենդանութեան ամենայն աստիճանը, և յետոյ զարգացող: - Իրենք իսկ կը պատասխանեն թէ չեմք կարող ապացուցանել. ուրեմն ենթադրութիւն մ'է: Սակայն ընդունելով նանդերձ այդ ենթադրութիւնը կը յաւելունք. եթէ այդ կոյր նիւթը յԱտուծոյ և, աւելարդէնոր ենթադրութիւն, վասն զի Ս. Գիրքն սքանչելի կերպով բացատրեր է սոյն, ա՛նոր համար նոյն իսկ թիւնառալ տարվինական կ'ըսէ (La foi et la science). « Կամ արարչագործութեան զիմաց զունքը բոլորովին բանալու է, և կամ գոյն բոլորովին ուրանալու է »: Արդ այդ նիւթը ուստի յառաջ եկեր է. ինքնիրեն. անկարելի է. վասն զի մեռած բան մի իրեն գոյութիւն չի կրնար տալ. ապա ուրեմն ձրի ենթադրութիւն մ'է տարվինական վարդապետութեան հիմը: Գարձեալ նոյն թիւնառալ կ'ըսէ. « Տարվինականք իսկ կը խոտոտանին՝ թէ չեն կրնար կենաց զարգացման կամ յեղաշրջութեան գոհացուցիչ փաստ բերել, եթէ չընդունին նախնական կենսատու զութիւն մը և կենան մը »:

Գ. F. Frédault, (Traité d'anthropologie physiologique et philosophique) ընդարձակօրէն խօսելով, ի մէջ այլ փորձերու, զայս ևս զիտեր և քննիչ է շատ

անգամ, այսինքն թէ հաւկիթն՝ քանի որ կենսական զօրութիւն ունի, կը դիմանայ ցոյցաւ ազդեցութեան, իսկ երբոր ստուգմամբ այդ կենսական զօրութիւնը կը սպաննուի, նա ոչ ևս կը դիմանայ ցոյցաւ: - Այդ փորձն միայն Լամարքի և իւր հետեւողաց բացատրութիւնը կը հերքէ. վասն զի կը ցոյցընէ, որ եթէ էակ մը զուրկ է կենսական ընթացքի գօրութեան՝ որ և է արտաքին պարագայ չի կրնար զինքը զարգացընել կամ կենդանացընել:

Դ. Եթէ Լամարքի և եթէ Տարվինի ենթադրութիւնն հիմնեալ է յայդմ, որ կար սկզբնական միատեսակ կենդանի, և այդ մի տեսակին զարգացմամբ յառաջ եկան այլ և այլ տեսակներ, որով ամենայն տեսակ փոփոխական են, և ոչ չատատուն և անփոփոխ: - Արդ այս փոփոխութիւնն տեսակաց՝ հակառակ է փորձոյ: Ա. Վասն զի Յոլք և Վլիքիլիտո իրարմէ հեռու ժամանակաւ, մեզմէ դարբերով յառաջ՝ նոյն կերպով կը նկարագրեն դճի, և մենք. ալ հիմա զայն նոյնպէս կը տեսնեմք: - Բ. Գարձեալ Արիստոտել զարբերով յառաջ կենդանեաց նկարագրել գրած է, և իբր կենդանեաց նման են ճշդիւ առանց փոքրիկ տարբերութեան: - Գ. Քիւլիէ (Discours sur les révolutions du globe), կը գրէ թէ երկրակալ կոթողներու վրայ փորագրուած կենդանեաց պատկերները քննել է, և զանք արդի կենդանեաց յար և նման գտեր է: - Նոյնը կը հաստատէ Ժոֆֆրուա Սէնդ Հիւր մուսիայից քննութեամբ: - Հոս զին խորը թաղուած Պոմպէի պեղումներէն կը հանեն ամբողջած ըոյսեր, սերմեր և պտուղներ, որոնք ըրողովին նման են այժմեաններուն: - Դ. Նոյն Քիւլիէ միանգամայն և Պիեթրոն կ'ըսեն, որ եթէ Տարվինականք և նմանեաց ենթադրութիւնն ստույգ ըլլար, երկրա խաւերուն մէջ գտնուած բարացեալ ոսկերաց գէթ ոմանք ցոյցընելու էին կենդանեաց միջին անկատար նոր տեսակներ, ինչպէս որ անոնց միջոցով կը տեսնեմք այժմեան կենդանեաց կատարեալ տեսակներ, նոյնպէս անցելոյն կատարեալ տեսակներ՝ որք այժմ կորսուած են: - Այս, կան զանազանութիւնք ինչ ի մէջ հին և արդի տեսակաց, բայց պատահական տարբերութիւնք են, զոր օրինակ՝ զուոյց, մեծութեան, և այլն, որք կրնան յառաջ գալ ի զանազանութիւն մտեղաց, կերակրոց, և յայլ նշանաբորնակ պատճառաց, բայց ոչ երբեք տեսակաւ կը տարբերին. և յերաւի Վլիքիլիտոի նկարագրած մեղուն նոյն է այժմ, և նոյն պիտի մնայ անփոփոխ:

Բ

Ա. Տարվինականութիւնը էսպէս յառաջադիմական է բուն իրենց նպատակին չի հաս.

ցններ անոր պաշտպանները: Իւ երբ մեզ կ'ըսեն թէ տարվինականութիւնը իբր յառաջադիմական է, և թէ ընտրութիւնը, ինչպէս ըսին Տարվին և Վալլաս, կը հաւաքէ անմիջական և անձնական օգնութեան յատկութիւններ, կը պատասխանեմք թէ տրամաբանութիւնը կը պահանջէ որ տիպարներ իբրաւ յաշրջին հաստատուն յառաջադիմական կարգով: Ընդհակառակն զարգացման զարարները, յետադիմական փոփոխութիւնք, այլապէս սերունդը, յետադիմութեան արագութիւնք (որոնցմով վերջին երեցած կենդանին ամենէն նախնականը կը համարուի) կը յաճախեն տարվինականներու զրոց մէջ. և ասոնք այնքան աւելի շատ են՝ որչափ որ դիտարը կը դժուարացնեն վարդապետութեան ամբողջական շէնքը միտանեցընելու այն ամենայն իրողութեանց հետ: Երկրաբանութեան և նշանաբանութեան իրողութիւնները, որոնք իբր ի նպաստ կը բերուին տարվինականաց, ընդհակառակն իրենց դէմ կը դիտուին, նոյն իսկ այդ քաջընուած համաձայնութեանց համար:

Բ. Երբ կենդանի կրեաները կը ցոյցընեն պատեան մը, որուն ոսկրացումը և մաժուրը տարիքին համեմատ կը զարգանայ, կերպարանափոխութեան գրուութեան արամբանութիւնն հետեւեմք կը բերէ որ, ապա ուրեմն ամենէն հին զարեւու մէջ ապրած տեսակներու ոսկրացումը, այժմեան սաղմոսային կերպարանաց զարգացման վիճակն պիտի ունենան, պիտի զի անոնք պէտք են նախնանման ըլլան: Արդ ընդհակառակն, ամենէն հին տեսակները նման են՝ արդի ամենէն յեղաշրջեալ և բոլորովին ոսկրացեալ պատեաններու տեսակներ: Բայց զանազան տարվինականք, ինչպէս Ռիւթիլէր, Եթիթիլ (F. Bernard, *Éléments de paléontologie*. Փարիզ 1895, երես 45.) ամենամեծ անտարբերութեամբ՝ կը վայելէ և կրեանակ զիրքով յեղաշրջման մը, որով թէ իրենց տեսութեան հիմը կը կը ապալեն, և թէ զայն անբաւական կը խոտոտանին:

Գ. Բրածոյ միջատները իրենց յաշրջութեան կարգով, յիշատակութեան արժանի վարդապետութիւններ կը ներկայացընեն: Ամենէն հինեղբ սիւրբերան խաւերու մէջ են և կը պատկանին ուղղաթիւից, մասնաւոր թէ են ուսիճները, որոնք այժմեաններու հետ քիչ շատ նման են, այնպէս որ հանդերձ ամենայն վարդապետութիւններով՝ նոյն գաղեն սկսեալ մինչև ցարդ ասոնց մէջ յեղաշրջում չենք կրնար հաստատել: Տեսնեաններու մէջ կը յաշրջեն ուրիշ տեսակներ զորս ամենայն օր ջլաթիւններով հետ կը գա. սէ. յաշրջը ամբարքը զարու մէջ, նոր և բազմաթիւ ուղղաթիւներէն գաւ, կը նշմարուին ասոնց և ջլաթիւնակաւ մէջ միջանակեալ տեսակներ: Ըստ տարվինականաց առաջին վարդապետութեան, այս միջանակեալ ձևերն ամբարքը զարեն առաջ պէտք էին

երևանա . բայց երբ տեսան որ հնէա-
բանութիւնը շատ անբաժնի չի նպաստեր այս
կարգերուն, այն ատեն հնարեցին բաղա-
դրակամ կոչուած տիպարները, որք են
անորոշ ձևեր, որոց ինչ տեսակաց պատ-
կաններն չէ որոշուած և կամ գնազանուած,
ինչպէս արդ կ'ըսուի, որոնցմէ պէտք էին
սերեալ ըլլալ ամենէն տեսակացեալ և ու-
րոշեալ ձևերն, ինչպէս ճիւղերն բունէն:
Բայց այս երկրորդ գաղափարը միջատներու
յեղաշրջման յարմարեցնելու համար, պէտք
էր որ ուղղութիւն և ջլաթիւ միջատներու եր-
բեմն ունեցած ձևերն՝ երեցած ըլլային թէ՛
մէկէն և թէ՛ միւսներէն անաջ և ոչ
յետոյ: Գալով յետոյ անխաբիւր շարու,
յաջորդ շարերուն մէջ գտնուած միջատ-
ներու կարգերու սերնդեան, չի գիտցուի
թէ ինչու տարբիւնականք, անխաբիւր շա-
րերու բազմազան ձևերէն կը սկսին՝ գանց
ընելով նախնիաց շարերու մէջ գտնուած
ջլաթիւ և ուղղութիւն միջատները: Տարբի-
նականաց շիտթութիւնը կ'առաւելու թէ՛
Սէզիլայի անխաբիւր խաւերու մէջ պատե-
նաթիւ միջատներու գիւտով, զորս առաջին
անգամ Տաթ 1883ին գտած է, և թէ՛ բրա-
ժայ միջատներու տեսակներէն գրեթէ 3/4 են
կենդանի ըլլալովն: Եւ իրենց այս շիտ-
թութեան նպատակաւ բան մը չէ ամենայն
մնակեմըմակամ միջատներու (paleodit-
tipteri) անունը, իբրև սպտեալ կարգ մը.
Վասն զի այն անուան սակ' միշտ անօգուտ
կերպով կը դասուին արդի ուղղութիւններու և
ջլաթիւներու ամենամօտ ձևեր և բազմազան
ձևերու օգուտ մը եղած չէ, որք յերևան
կու գան այս վարդապետութեան կամաց հա-
կառակ (K. Zittel, *Traité de paléontologie*,
երես 764. Փարիզ 1887: F. Bernard, *յիշ-
նեղ. երես 592: F. Priem, La terre a-
vant l'apparition de l'homme*, երես
115. Փարիզ 1895): Անուան ինչու հա-
մար շատ մը հնէաբանք կը սկսին բտելով՝
որ բրաժայ միջատաց յաջորդութիւնը յեղա-
շրջման նպատակով չէ: (Տես F. Meunier,
*Observations sur quelques insectes du
Corallien de la Bavière*, Riv. ital. di
paleontologia, A. III. տետր. 9, երես
25, Փարիս 1897.)

Գ. Յոկիդիներ ornithorhynques գանձա-
կաւորաց marsipiaux նախորդներն՝ համա-
րուած են, և զայս կ'ապացուցանեն իրենց
կազմութիւնը կ'ըսեն տարբիւնականք. սակայն
եղիւրաբանաբար յետոյ առաջ եկած են: Եւ
անուանի վոկթ (G. Vogt, Մոմաւորք)
նախաակ *Հեկթիլ* (E. Haeckel, Պատ-
մութիւն բնակամ ստիգմամ, երես 403)
գանձիւր յետագէմ գանձակաւորաց մէջ կը
համարի. ուրեմն նաև նա տարբիւնակաւոր-
ութիւնը թիւրիմաստ է: Եւ յետոյ մինչ
ցոկիդիներու և թուրաններու մէջ մերձաւոր-
ութիւն մը կը ձանձնայ, չի հասկնար թէ
ինչպէս թուրանները սանաւորաց ծննդա-

բանութեան մէջ ընդ կ'ըլլուին: — Հեկթիլ
(վերոյիշեալ գրոց մէջ, էջ 581) կը
վկայէ թէ միանակեմորր monotrèmes ան-
տարակոյտ արխատան գեանակներու մէջ
գտնուած կենդանեաց յետին մտարդն են:
Բայց իսկայն կը յաւելն որ զժբաղդա-
բար այս խումբէն, որ սանաւորաց առա-
ջին ցեղն է, ծանօթ չէ իրենց բոլորը-
վիմ ստոյգ ըրածոյներում միացորդն:
Ուր է արդ առաջին երկու տողերուն ան-
տարակաւորութիւնը: Սակայն արխատան
սանաւորները ամեն հնէաբաններէն իբր
գանձակաւորներ ընդունուած են. և ծանօթ
է որ Տը Պըլէնվիլէն սկսեալ կենդանաբանք
գանձակաւորները սանաւոր խումբ մը հա-
մարեցան, իբր որոշեալ ի միանակուց: Յե-
տոյ պէտք էր որ Հեկթիլ մեզ բացատրէր՝ թէ
ինչու այն ամենայն գարեն միանակները
սպասեցին մինչև չորրորակ գարն՝ վերստին
ներկայանալու յԱւստրալիա, նշան մը չի
թոյլով հազարամեղերով խորութեամբ
գետնակներու, և այնքան միջանկեալ հա-
զարաւոր դարերու մէջ: Բայց Հեկթիլ ցոկիդ-
ներու և թուրան իրարու բացայայտ նմա-
նութեան ուշ չի զննը, վասն զի այս
գուցէ իւր նախագաղափար վարդապետու-
թիւնը տակնուվրայ կ'ընէ:

Ե. Համարիք՝ թէ Վոկթ իրաւունք ունի
ցոկիդիները յետագէմ գանձակաւորներ կու-
չելու. և իրաւ այնչափ յետագէմ եղած
են, որ կենդանաբանք, ինչպէս ձանապար-
հորդը, անոնց համար կ'ըսեն թէ ձևեր են, որոց
գործարանաւորութիւնը դժուարաւ կ'աճի,
և յայտնապէս անհետանալու վրայ են, և
անկարող կենաց պայքարը պաշտպանելու:

Բայց այն ատեն ուր կը մտնա տարբի-
նական վարդապետութեան հիմունքը, և
ինչպէս յետ ընտրութեան յառաջ եկեր են
պնդիտի յետագէմ տեսակներ, անկարող
գիւնազրելու նոյն իսկ կենաց պայքարին,
որուն անուամբ առաջ եկած են: Անսովոր
է նաև Վոկթի նարած այն յետագիւնու-
թիւնը, որով միանակը երբեմն կ'առնուն
թուրան և գենոց յատկութիւնը, այսինքն
կը գտնան անսովոր տիպարներու, որոնք
կը մասնակցին երկրորդակ շրջանին կի-
սոյն մէջ ճարձմ երկու դասերու: Իբր այն
է որ՝ ամենայն ոք լաւ փաստեր կ'ուզէ ի
մէջ բերել, ի նպատակ ազգակցութեան թըռչ-
նոց, գանձակաւորաց, գենոց և նոյն իսկ
երկակենցաղ անասնոց: Բայց երբ ար-
միւնականք ներկայ կը գտնուին կատարեալ
տիպարներու տարբիւնակ իրողութեանց,
այն տիպարներու՝ որոնք երկրաբանական
զարագլխոյ մը մէջ երեցած են և չեն գար-
ներու մէջ, վերստին սկսելու համար յետ
ընդ երկար դարերով անգործութեան մէջ
մնալու (ինչպէս պատահած է գենոց և
սանաւորաց), այն ատեն կը զիմուի երկար
ատեն թաքուն մնացած յեղաշրջական 90-

րութեան կեդրոնացման, կը խօսին կու-
տեալ ազգեցութեանց վրայ, որք ժամանա-
կի մը մէջ պիտի յայտնուին (F. Ber-
nard, *Éléments de paléontologie*. Փարիզ,
երես 19.). և այլ ևս բանի տեղ չեն դը-
ներ յարմարման և փոփոխութեան օրէնք-
ները, խորհրդածելով յեղաշրջումը ոչ ի-
բրև բոլորակաւ երկայթ մը՝ հիմեալ կարեւոր
է որով շարունակեալ օրինաց վրայ, այլ
իբրև վարդ Ֆելդիական ոյժ մը ընդունակ
փոխուելու և կուտուելու:

Այս ամէնն տարբիւնակաւորութեան ստույգ
և յատուկ տկար վարդապետութիւնք են,
բայց այսու հանդերձ և արմարանու-
թեան հակառակ՝ անոր հետեւողները, զրու-
թեանց մէջ ընտրելապայման կը համարին և
զայն մերժողաց դէմ կը բողոքեն:

Գ.

Ա. Հակառակորդը կը սկսեն, թէ գա-
նադան տեսակաց խառնմամբ յառաջ եկած
են նոր տեսակներ: — Այսմ ևս Քիւվիէ
կը պատասխանէ թէ այդ ալ փորձոյ կը
հակառակի. վասն զի ընտրութեան հակառակ
խառնուրդը են, մինչդեռ ընտրութիւնը կը
պահանջէ որ սկզբնական տեսակը աւելոյ
պահուին: Եւ եթէ մարդկային ճարտարու-
թեամբ և գիւտով այդպիսի խառնուրդը
ըլլան, կամ նոր սերունդը յառաջ չեն գար,
կամ եթէ յառաջ գան, ինչպէս ջորին, այդ
տեսակն խառն է և ամուլ, և կամ յետ մի
քանի սերնդոց կը կորուսի:

Բ. Ի դուր զիմեցին և կը դիմեն փնտռելու
բուսոց և կենդանեաց ընտանի ցեղերուն
մէջ անասնման փոփոխութեան փորձ մը:
Փոփոխութեան չափազանցութիւնը կ'ար-
գելու ծննդեան կարողութիւնը, և ցեղի
պարզութեան գանազանութիւն մը կ'ըլլայ: Ի
դուր կը խօսուի մարդկային ճարտարու-
թեամբ յառաջ եկած ազգերու և տեսակ-
ներու վրայ, զորս ձեռք կը բերեն ազանի-
ներ խնամելով, որոնք հազիւ թէ մարդկանց
ազգեցութեանց կ'ազատին, իրենց վայրի
ընտրութեան տէր կ'ըլլան, իրենց նախա-
ծնողաց պէս:

Գ. Ի դուր վայրի անասնոց մէջ խառնա-
ծնութեան իրողութիւնը առաջ կը բերեն,
փորձելով որ տեսակն ունկայուն է, և անոր
կը սկսուի նոյն իսկ խառնածնութեան փորձը,
և ծննդաբերութիւնը միևնոյն տեսակաց մէջ
միայն տեղի չունենար: Այս իրողութեանց
ամենասակաւ ըլլալը և խառնածնութեան շատ
սերունդներու մէջ չի գիմանալն, հասարա-
կաց օրինակ նպատակութիւն մ'է, այսինքն
նախնական տեսակաց նախատիպ օրինակաց
պահպանութեան յոճարութիւնը կը ցուցնեն:

Դ. Տարբիւնականք իրենց այս վարդապե-
տութիւնը հաստատելու համար՝ նպատակաւ
կը կարծեն քաբէնի chabins և լեպորդի le-

prod երկու զէպերն, զորս իրենց գրոց
մէջ յափրանալու չափ կը յիշեն, ցուցնե-
լու համար թէ խառնածնութիւնը (գանա-
զան տեսակ կենդանիներէն յառաջ եկած
ծնունդ) բերուն սերունդ մը ունի: Քաբէնի
(Հիւսիսային Ամբրիլոյ մէջ գտնուած նա-
խազի և մարչը խառնածնութեամբ առաջ
եկած խառնածն կենդանի մ'է, որ ընտիր
բուրդ կուտայ) զէպը խաբեց նաև գիւս-
թըրթթած, (A. De Quatrefages, *Espèce
humaine*. Փարիզ 1875.) որ զայն հշմա-
րիտ խառնածնութիւն կարծեց, առանց ըն-
դունելու անոնք անասնման սերունդը: Արդ
Գորնըվէն մտերս համընթացաբար և խիստ
հետազոտութեամբ քաբէններու խառնածն-
ութիւնը բացարձակապէս մերժեց: Նա իւ-
րովոր մէջ քիչ խառնածնակ առաջ երկու տե-
սակաց զիւրին խառնածնազոյն հանդերձ,
նման արդիւնք մը չունեցաւ: Այն ատեն
Սիլէի բնիկ քաբէններու վրայ անգամազննա-
կան փորձեր կատարեց, յետոյ այդ փորձին
կարող մարդկանց ձեռքով Սիլէի մէջ քննել
տուաւ զայն ձանձնալու համար՝ թէ տեսա-
ցիք գտանք ինչպէս առաջ կը բերեն և թէ
ասոնք բուն ուր կը գտնուին, — և վերջապէս
Սիլէի մէջ խառնածնութեան ուղղակի փորձեր
(խոյր այժի հետ, նոխազը մարչոյ հետ, և
թերաբազը — խառնածնութեամբ առաջ ե-
կած քաղ — թերաբազը — նոյն կերպով
ծնած մարչ — հետ) կատարել տալէն վերջը,
յայտնի և պայծառ արդիւնք մը չի տեսաւ:
Քաբէնները չեն և կարելի չեն այլ ևս ըն-
դունուիլ իբրև խառնածնուրդ, ասոնք
ոչխարի պարզ ցեղի մը կը վերածուին, և
բաւ Գորնըվէնի՝ նոյնպէս սխալ է
համարելն թէ կ'առնաճարք ճազարի և նա-
պատակի ընկան և բեղնաւոր խառնա-
ծնութիւնք են, մինչդեռ ճազարի ցեղ են:
Գորնըվէնի եզրակացութիւնը ներկայանա-
լով Փարիզու (*Comptes-rendus de l'A-
cadémie des sciences*, Séance du 3 août
1896.) գիտութեան Ակադեմիային, ի հա-
տատութիւն Ալֆոնս Միւսի Խառնարտի
կարեւոր տեղեկութիւնները ի մէջ բերուե-
ցան, որ բաւ թէ 1886ին որոշակի տեսած
էր որ Սիլէին եկած քաբէնները իրարմէ
հաստատապէս յառաջ կուգան և ոչ երբեք
խառնածնութեամբ այժի և մարչոյ: Եւ կը
յաւելու որ սոյն փորձը կատարելով անի
(վայրի ուխտը) և այժի, նոյնպէս քառալի
և այժի մէջ, ապարդիւն մնացած են. ի բաց
տեսալ մէկ անգամուս, բայց ծնունդը վի-
ժած է և ծամանակէն շատ առաջ պատա-
հած է: Իւրաքանչիւր ոք կը տեսնէ ուրեմն
ինչ արժէք ունին որոտընդոտ փաստը բեղ-
նաւոր խառնածնութեան, որով կը ջանան
ուրանալ բեղնաւորութեան յատկութիւնը՝
զոր հին դպրոցը միայն յատուկ կը համարի
միևնոյն տեսակի ցեղերուն իրարու մերձա-
ւորութեան:

Ե. Փարով անորոշ և անստույգ ծագումն

ունեցող ընտանի տեսակաց (ընտանի արջառ *Bos taurus*, ընտանի շուճ *Canis familiaris*, Զի *Equus caballus*, և այլն), առանց հաւասար կամ անհաւասար վայրի տեսակներու խառնածնութեամբ յառաջ դառնալու խնդիրն հեղինակներէն զանազան կերպով լուծուած է, ըստ որում իրենք կ'ընդունին բեղմնաւոր կամ ամուր խառնածնունդ, ուստի սակէ չի կրնար առաջ բերուիլ տարբինականութեան ի նպաստ կամ հակառակ փաստ մը: Չի գործեր պնդելն թէ միևնոյն տեսակի անհասանելի շատ անգամ զանազան ձևեր ունին, ինչպէս սա կը պատահի փոխանակաւ ճմուռնի և բազմակերպութեամբ զեպքին մէջ: Վասն զի այն ձևերն ամենորոշ կանոնով կը զանազանին, և հաստատուն կերպով կը դառնան նոյն ձևին նոյն կարգով, փոփոխակի նոյն սերունդներու մէջ: Կը յիշուին փափկամորթներ (*Dreissena polymorpha* Sav), որոնք հիւսիսային Ռուսաստանէն եկած են Նիւրնպահ և տարածուած են ամէն տեղ, որոնք յարմարուած են արևմտեան զետեւրուն, լճերուն և ճախճախտ տեղեաց, և վերջապէս ըմպելու ջրերու ջրատար խողովակներու մէջ, և նոյն լաւ կերպով կ'աճին (Von Martens in Brehm, *Les vers, les mollusques*, և այլն. Փարիզ 1884. երես 504.), բայց տաղանդաւոր ընագրատումը մտքերնին չեն դրած, այս ամէն փոփոխութիւնքը նկատել իբրև նոր տեսակներ: Եւ ըսել թէ կազմուելու վրայ են, այս իսկ է ապացուցանելի կէտն. որովհետև որպէս զի այս տեսակաց յատկանիչք որոշակի հաստատուն վէտք էր որ անցնէին սահէին քանի մը հազար տարիներ: Գոնէ երկու կամ անելի վրայ է վրայ դրուած կամ իրարու մօտ միևնոյն տեղուց մէջ խաւերու հանածոյ տեսակները ունենային աստիճանաւոր անցումներ, զորս կը պահանջէ տարբինականութիւնք, մինչև որ լեցուի շրջանին ձևերուն և միւս յաջորդ շրջանին տարբեր կերպարանաց մէջ գտնուած դատարկութիւնք: Եւ նեւարանք պաշտպանք տարբինականութեան կը խոստովանին որ ամենէն լաւ քննուած երկիրներու մէջ, ինչպէս Փարիզուն, կայ ստույգ ստուճ մը, մէկ խաւի և միւս յաջորդին տեսակաց մէջ: Թէպէտև անկարելի է՝ որ ընդունին խաւազարական դատարկութիւն մը, կամ թէ ըսել այս երկիրներու մէջ ընդհատում մը:

Չ. Հոս յայտնապէս փախուտ կը փրնտուն, այս դրութիւնը հակառակ ամենայն փորձոյ պաշտպանելու համար: Է. Տարբինականներէն պահանջուեցան փորձեր տեսակայի տեսակայ անցումներուն, և պատասխանեցին թէ երկրիս խաւերուն մէջ ծածկուած են: Սկսան իրարու մերձաւոր և յաջորդական խաւերու մէջ զննութիւններ ընել և բռնադատուեցան խոստովանելու, որ այս անցքերը եթէ կա-

րենան գտնուել ամենափոքր երկրի մէջ, հրաշք մը պիտի ըլլար: Արդ ինչ պէտք ենք մտածել այսպիսի դրութեան մը վրայ, որուն ընդդէմ կը զինին իրողութիւնք, և անծանօթի և նարաւորի մէջ խաւերու փելով, միշտ յուսալով ինչպէս կ'ըսէ Գալթըրֆաճ, որ անծանօթը և նարաւորը ի նըպաստ իրեն պիտի ըլլան: - Ներուի մեզ ընդերկար որոնելու տարբինականաց ստեղծած մի ուրիշ խնդիրն, այս է մարդու ծագումն ենթադրութիւնք:

Գ

Ա. Արդ ինչ ըսենք այս ենթադրութեան՝ որ շատ իրողութիւններէ հարուածուելով հանդիւր, կը պահանջէ որ նկատուի ինքը իբրև գիտնական լուծում մը մարդկային ծագման ամենէն ծանր խնդրոյն: Արդէն ստակ տրամաբանութիւնը ազատ կ'ընէ նոյն իսկ այս առաջարկութեան մօտենալէն, յետ ապացուցանելու որ այս ենթադրութիւնը կենդանեաց համար ընդունելի չէ: Յետոյ զիցուք թէ ճշմարիտ ըլլայ, բայց մեզմէ շատ բան կը պահանջուի զիս ապացուցանելու համար անոր օրինաւոր յարմարում մարդու, քանի որ երեկել ընագրատումը ինչպէս ժեօգրուա տը Սէնթ-Ղիլեր, Փոուներպէյ, Թրեվիբանու, Տէ Գիլիփի և ամենէն արդիներէն Գալթըրֆաճ ծանր փաստերու վրայ յեցած՝ մարդկային տեսակը առանձին մարդկային թագաւորութիւն մը համարեցան: Արեւմտ կայ ինչ մը որ զմարդ իբրք ամէն տեսակ կենդանիներէն վեր կը զնէ, և որով թոյլ չի տար անոր յարմարեցնել նոյն օրէնքները և տեսակները, թէպէտ ճշմարիտ ալ ըլլան և կենդանեաց յարմարին: Բայց մենք սա ժամանակ զայս շնորհեք տարբինականաց: Այլ պէտք ենք քննել այն հռչակաւոր իրողութիւնքը՝ զորս կը համբաւեն իբր ի նպաստ մարդկային սերնդեան և ստորին տեսակաց: Եւ զայս ընելով, կրնամք քննել արժէքն այն իրողութեանց՝ զորս ի մէջ կը բերեն ի նպաստ դրութեան: Վասն զի մը և է գրութիւն ունի իրեն ի նպաստ մի քանի իրողութիւն, կամ լաւ և ըսելով, ունի իրողութիւններ՝ զորս նա կը բացատրէ, և արդար է հաստատել թէ տարբինականութեան դրութիւնը այն իրողութիւններէն շատ ունի: Բայց նախ և առաջ բացատրութիւնը պէտք է քննադատութեան զիմանալ. երկրորդ եթէ դրութիւնը կ'ուզէ անհակաստեղի համարուիլ, պէտք է որ իրողութիւնք ուրիշ կերպով չի կարենան բացատրուիլ, ապա թէ ոչ՝ դրութիւնը կը մնայ ենթադրութեան վիճակի մէջ: Փորձառական գիտութեանց մէջ իրողութիւն մը նոյն արժէքն ունի ինչ որ արտմաբանութեան մէջ կոչի ապացուցակաւ փաստ, եթէ յարթէ այլ ամէն բացա-

տրութեանց, և միայն հակահաստատութեան ենթադրութեան ձևերով բացատրուի: Բ. Բաժնուտ օրինակ ամենուր ուրիշ զիտութիւնները: Երբ լուսաւոր ճառագայթ մը խիտ միջոցէ մը անցնելու ժամանակ բեկեկելի, իւր տարածման արագութիւնը կը նուազի. և այս զեպքը ծածանման դրութեամբ լաւ բացատրուած է. բայց եթէ այնու հոման հին տեսութիւնը փճանայ, ոչ որ կրնայ հետեցնել թէ միայն ծածանման գրութիւնը ընդունելի է. վասն զի իրողութիւնը միւս բացատրութիւնները չի մերժեր, և որով սա իբր ենթադրութիւն կը մնայ: Երկրիս իւր առանցքին վրայ դառնայն առաջներն իբրև պարզ ենթադրութիւն մը ընդունուած էր. բայց երբ Ֆուբուր ցուցուց որ երկայն ճօճուն ճօճանակ մը ճօճման առեւն հիւսիսէն ի հարաւ կը տեղափոխէ իւր ծածանման մակարդակը, ենթադրութիւնը եղաւ ճշմարտութիւն. վասն զի այն իրողութիւնը ուրիշ կերպով չի բացատրուի: Այս և ոչ այլ ինչ պէտք է ըլլալ արժէք իրողութեանց, զորս տարբինականք մեր առջև կը զննու, որպէս զի կարենալ ըսուիլ թէ տեսակները ստորնագոյն ձևերէ ինչո՞ւ են: Զայս և ոչ այլ ինչ մենք ալ պէտք ենք պահանջել իրողութիւններէն, զորս ի մէջ կը բերեն ցուցնելու թէ մարդ անբաններն առաջ եկած է:

Գ. Անցնիք արդ ցուցնելու այս վարդապետութեան խաբէական ըլլան և հակահաստատուն նոյն իսկ իրեն սկզբան:

Ե

Ա. Տարբինականք կ'ըսեն թէ մարդս կենդանեաց մէջ ամենէն աւելի մարդակերպ կապիկներու կը նմանի, ուրեմն անոնցմէ յառաջ կու գայ: Այս ապացուցման արտմաբանութիւնը ո՞ր է. վասն զի նախ հարկ է ցուցնել որ մարդս պէտք է սերել ի ստորնագոյն տեսակաց, և բարձեալ ցուցնել թէ նմանութիւնքն ինչ արժէք ունին, և արդեօք մարդու և կենդանեաց մէջ եղած նմանութիւնք թէ տարբերութիւնք շատ են: Արդէն յայտնի է որ Հիւսթել, այս պատճառաբանութիւնը չափազանցութեան տանելով, կ'ըսէ թէ մարդս աւելի մարդակերպ կապիկաց կը նմանի քան թէ այս կապիկներն կատարինեան (Catharrhinien հին աշխարհի կապիկներ) կապիկներուն. և Հեկթէ Հիւսթելի այս գիւտը ծափահարութեամբ կ'ընդունի. բայց ասոնցմէ վերջը, ուրիշ մ'ալ ըսաւ թէ մարդկային ստորնագոյն ցեղերը աւելի մարդակերպ կապիկներու կը նմանին, քան թէ մարդկանց բարձրագոյն ցեղերու: Ասոնց պէտք էր հարցընել, թէ ո՞րքա՞ քանակաւ արդէ թագմանիս և Մարէզիս այցելուու առեւ, տեղացի վայ-

րենիները տեսած ասեննին զանոնք կապիկ տեղ զրին: Տարբիւնէն առաջ Ֆոբուս ըսեր է թէ մարդս և կապիկները նախնական սիպէ մը առաջ եկած են: Այս կապիկները մեծ տարբինական քարոզիչը Օրանկութեանը և միւս բարձր դասու կապիկները չօրնիլ-րորորիլ անուանելով կը համբուրէ: Իսկ արդի իտալական ամենէն երանգուն տարբինական Գանեստրինի չի տարակուսիր ըսելու՝ թէ պարզապէս ճարտասանական բացատրութիւնք են տարբինական հիմնադիրներուն այն խօսքերն, ցուցնելով որ մարդս և կապիկը առանձին տիպարներու կը վերաբերին, այնպէս որ ոչ մի ընտանաւորում կրնայ զանոնք իրարու հետ շփուիլ (G. Canestrini, *Per l'evoluzione*, Թուրին 1894. երես 147):

Բ. Այս վերոյիշեալ հեղինակին դատաստանը զետ աւելի առաջ երթալէն դիմե՞տ գատ կ'ընէ զմեզ: Բայց սակայն նշանաւոր է Գանեստրինի և այլոց արամաբանութիւնը, որք յետ միանգամ հաստատուելու տիպարի զամազանուիւն մը, այսինքն արմատական, կը հետեցնեն թէ մարդս ծանօթ մարդակերպ կապիկներէն չի կարենալով յառաջ գալ, հասարակաց նախածնողէ մը յառաջ կու գայ: Ար է ըսել, ինչ ալ ըլլայ՝ անհրժեշտ ստորնագոյն ձևէ մը եղած պիտի ըլլայ: Եւ որովհետև սա մինչև ցարդ չէ գտնուած, Հեկթել սովորական փախստեամբ մը գեղ կ'ապահովցնէ՝ որ այսպիսի տեսակ մը գոյութիւն ունեցեր է երկրաբանական նախնական շրջանաց մէջ:

Գ. Մի այլ զեռագուստիկ ճոռոմաբան տարբինական կ'ըսէ. « Արեւնք մեր ամենամերձաւոր նախահայրը: Նա ոչ Երմփանտէ է, ոչ կորիլ, ոչ Օրանկութեան և ոչ Ժիպոն: Մեր իսկական հայրը հնագէտ է: Մի որ անտարակոյս - անտարակոյս! - հնէաբանութիւնը ի լոյս կը բերէ զայն »:

Դ. « Սոյն բոլոր առանձնայատկութիւնները, որոնցմով, հակաէտլոցիոնիտները կը ճշնէին բաժնել մարդը միւս: կենդանիներէն, կամ գոյութիւն ունին այդ վերջիններու մէջ ևս, և կամ կը բացակային ամենաստորին մարդկային ցեղերու մէջ: Խօսք չըկայ, եթէ համեմատեցն մի կանա կամ մի Սպինսեր ամենաբարձր կենդանիներէ հետ՝ անգունդ կը տեսնենք մէջ տեղը: Բայց Սպինսերն մինչև հիմակուան ափրիկական Բուշմենը կամ Պապուասը ևս անազին տարածութիւն է: Այնու ամենայնիւ Պապուասներն ու Բուշմենները նախնական մարդէն ալ աւելի բարձր են, որ ապրած է մեզմէ շատ դարեր առաջ երկրաբանական երբորդական շրջանին մէջ: Նախամարդը, տիկտը, թափառական, առանց որ և է զեքի և զործեաց, բերու և ապուշ, քարանձաւներ կամ ծառերու փճակներու մէջ կուչ եկած. աչա՞ որուն հետ պէտք է համեմատել առնուաներու հետ »: (Միլքայել Յոհաննէ-

սեան . Էլոլիցիայի զաղափարը : Մորս ամառադիր 1898 . Մայիս N^o . 5 . էրես 661 :

Ե . Տեսքը ինչ աստիճան երևակայական բանաստեղծութեան կը զինեն փորձառական և զրական զարդի նեռեղը : Շատ չէ եթէ մարդս , իւր արտաքին ձևին համար պարզապէս մարդակերպ կապիկաց նմանէր : Չարագոյնն այն է որ նա ունի յատկութիւններ որոնց նմանութիւնը , զայն ազգակից պիտի ընէին անչայտ երկիրներու զանազան և բազմատեսակ կապիկաց : Մինչդեռ մարդու գանկին ներքին տարածոցը , և ոտուրնեղուն ձևը դիտելով , զայն պիտի նըմանցընէին Մարդակապիկ . ձեռաց նայելով՝ պէտք էր յառնէ զար Շիմփանուէէն , գանկին ստորաքին չափակութեամբ՝ պիտի մտնէ նար Պրապիլի Ուիթիթի , քթովն Շամրակապիկի (*Semnopithecum nasica* , կրծոսկրային կմախքով կրկայնարարուկ կապիկներու (*Hylobates Lar*) . Ուրեմն ինչ իրաւամբ զմարդ նման կը համարին միայն մարդակերպ կապիկաց : Գուցէ ուղեղին տարածոցին համար : Բայց նոյն իսկ Պանեստրինի (G. Canestrini, *La teoria dell' evoluzione esposta nei suoi fondamenti* . Թուրին 1877, էրես 160) կ'ըսէ թէ իւր չափած մարդկային գանկերուն ամենին փոքրն մինչև 1021 հարկարգամբը խորանարդ ընդունակութիւն ունի , մինչդեռ կորիւր մը ամենէն մեծ գանկը 500 հարկարգամբը խորանարդ ընդունակութիւն ունի և ոչ աւելի : Եւ ոչ ինչ զօրէ ընդդէմ այս աղաքուցութեան ի մէջ բերել փոքրագուրն գանկերը , որոնք օխտական և անկանոն բաներ են՝ քան զոր կարելի է երևակայի :

Չ . Կ'ըսուի թէ մարդու ուղեղային ծայրերը՝ Օրանկութեանն աւելի բազմաթիւ և բազմաճիւղ չեն : Բայց եթէ այս ծայրերէն պիտի դատուի իմացականութեան աստիճանը , ինչո՞ւ մեծ անդուշտ մը կը տիրէ մարդու և օրանկութեան իմացականութեան մէջ : Անդուշտ մը՝ զոր տարվինականը կ'ընդունին , այնչափ որ կը ջանան ցուցնել թէ յեղաշրջութեամբ նաև իմացականութիւնը զարգացած է : Ըստ մեր կարծեաց , սա կը ցուցնէ միայն մարմնական նմանութեամբը հանգերձ թէ ի մարդու կայ բան մը , որուն է ոչ իսկ զոյգն հեռքն կրնայ տեսնուիլ մարդու ամենէն աւելի մերձաւոր կենդանեաց վրայ : Եւ սա մեզ համար ամենէն զօրաւոր փաստն է մերկուր օրեկից սերունդ մարդկային ի ստորնազոյն տեսակէ :

Ե . Մարդանման կապիկաց երեսը և դուրը մարդու և նմանին միայն մանկական հասակին մէջ ձեռնարկով այս նմանութիւնը բարբոթի կ'անհետանան , այլուրակ կապիկանման զիմանկար մը կ'ունենան . մինչդեռ պէտք էր հակառակն պատահէր ըստ տարվինականաց զարգացման օրէնքին : Կըրնանք տեսնել զես ուրիշ աննմանութիւնը

կամ տարբերութիւնը՝ որք կը գտնուին մարդու և մարդանման կապիկաց մէջ . մարդկանց ամենէն տեղին բազմաթիւնը այս կապիկաց ամենէն զեղեցիկն է , չէ գտնուած և ոչ իսկ դոնէ մի զեղեցիկ կապիկ որ մարդու վայելուչ զեմքն ունենայ : Մարդակերպ կապիկաց բոյթ մասը աշտառարը չի կրնար շարժիլ ինչպէս մարդու : Մարդկային աստմնային աղեղը կ'աւարտուի է . ախտանքը առանց անջրպետի , և շատամուկը ոչ դուրս ցցուած . մինչդեռ մարդանման կապիկացը երկայնաձև է , աստմանց մէջ կան անջրպետք , շատամուկը դուրս ցցուած , սրով այլանդակ կերպարանք մը կ'ունենան :

Ը . Եթէ ինչանք այն համեմատութեանց զոր տարվինականը կը կատարեն մարդկային և կապիկաց ոտից մէջ , իսկոյն մեր աչքին կը հանդիպի ունեիլ ոտուրնեղուն անուն՝ զոր Հիւքսէյ կապիկաց յետադուստեան ձեռուրնեղուն կուտայ , անշուշտ անոնց անունն զանազանութիւնը նուազեցընելու համար : Բայց խնդրը բառի վրայ չէ , այլ նիւթոյ վրայ : Փոխենք բացարձակութիւնը որչափ որ կ'ուզեն , բայց միշտ ճշմարիտ է և պիտի ըլլայ , որ կապիկաց ոտքն , նաև մարդակերպից՝ ունի ատաղին մատ ընդդիմադիր , որով միւս մատանց զիբրով չի շարժիլ և անոնց յօգուածները չունի : Եթէ զեղեք նոյն ևս ըլլան ճշմարիտ , չարձէ ինչ , վրան զի տարբեր յօգուածականութիւնը մարդն իսկ մեծ անդամազննական զանազանութիւն կը ցուցնէ , որ զգալի է թէ ոսկերաց և թէ կապիկուն համար :

Թ . Եւ երբ Հեկքել կ'ըսէ թէ բարձրագոյն դասի կապիկաց , և մանաւանդ մարդակապիկն ձեռք և ոտք կը տարբերին իրօք ինչպէս ի մարդս՝ կը իտալի և համոզուելու համար բաւական է քննել Ռանքի գրոց մէջ եղած պատկերներն : Նոյն Ռանքի Հեկքելի հաստատած միւս խնդրը իւր առասպել կը համարի , իբրև թէ մի քանի մարդկային ցեղից ըթմամտը գրեթէ ընդդիմադիր ըլլայ : Վրան զի որչափ ալ այս խոտորուծն կը տեսնուի մանկանց վրայ , բայց անոր յօգուածները պատանիներուններէն չեն գտնուանուիր , ինչպէս չեն գտնուանուիր անոր համեմատութիւնը նկատմամբ ոտից մնացած մասին և անոր կատարելուպէս հարթ կտորին : Գալով վայրի մարդկային ցեղերուն , ցուցուած է որ իրենց ոտից ըթմամտը ընդդիմադիր չէ , թէպէտև երկարժամանակեայ սովորութեամբ վայրժին զայն բուն ձեռաց մասի տեղ զորձածուր : Այս նաև բարձրագոյն մարդկային ցեղերուն վրայ ալ կը տեսնուի . օրինակի համար Հոովմ զաղթական Սրաբալուց մէջ՝ ոմանք ոտից ըթմամտով զարմանալի կերպով ձախարակի ամենաբնութիւնը գործեր տեսած են : Եւ ոչ որ կրնայ բուր թէ Սրաբալուց ստորին մարդկային ցեղ մ'են :

2

Ա . Սոյժմ քննենք սաղմաբանական փաստը՝ զոր ի մէջ կը բերեն տարվինականը ի նպատակ իրենց կարծեաց՝ իբր թէ մարդու կը սերի ի կենդանեաց : Մարդկային սաղմաբանութիւնը այն աստիճանի այժմ զարգացած է՝ որ գրեթէ ճշմարտութեան կերպարանք առած է , և այդ փաստն առաջին անգամ մեծապէս կ'ազդէ մանաւանդ անուսից վրայ , և կրնամբ իսկ բուր՝ որ հասկանալիորակ ամենէն աւելի զօրաւոր փաստն այս է :

Բ . Ըստ այժմ մասին , կենդանուց մը սաղմաբանական զարգացման շրջանին մէջ ունեցած փոփոխութիւնը յաջորդաբար ի մէջ կը բերեն անոր նախնեաց նոյն յատկանիչը , սկսելով յատկաբաններէն և միեւնոյն կարգով , և ամենակարճ ժամանակի մէջ : Ասկէ նետեցուցին օրէնք մը՝ զոր Հեկքել կոչեց յիմաստձեղմը Ռիմնակամ , և որ ըստ իրենց հակահաստիճան նիւթ չէ սյլ ևս , այսինքն է՝ անձնուրձ (անհատին զարգացումն) չէ սյլ ինչ բայց եթէ տեսական ծնունդ կամ զարգացումն համառոտեալ և կարճ : Իսկ այս օրինաց արարող կամ մեղեկական պատճառն է ժառանգութիւն , որով նախածնողաց յատկանիչքն՝ թէ և ամենաճիւղը , չեն ջնջուիր , այլ կը մնան և զարգացման սկիզբները կը յայտնեն ընտրութեան պատճառով կերպով ընական ընտրութեան պատճառով որ կը զարգացնեն և կը հաստատեն անհատին ամենաբնածաւոր և բարձրագոյն կերպարանաց յատկանիչքը : Այս օրինաց զօրութեամբ մարդկային սաղմն կ'անցնի առանց անհատական մեղմայն աստիճաններէն մոնէրի , մոտուրայի , ըլսատուրայի , գատարուրայի , որոյ , պարտաւի , սկրախի , ձկան , զենոյ և վերջապէս ստնաւորի , զգնելու համար միշտ աւելի յատուկ կերպով զանազան կարգաց յատկանիչքը մինչև ցոտական մարդկային : Նոյն իսկ յատկանիչք ըստ կարգի յառաջ կուզան ընդհանրաբաններէն զեղ ի մասնաւորն ելնելով , անկատարագունէն զեղ ի կատարելագոյնը : Հետեւաբար նոյն իսկ հանածոյ տեսակներն՝ զոր զորձարանաւորականն իւր նախորդաց մէջ կը շատէ , հարկ է զըտնուելն զարգացման համապատասխանող վիճակին մէջ :

Գ . Տարվինականաց այս փաստն որչափ պարզ և համոզիչ է՝ երեկ , սակայն հարկ է ըսել որ շատ խորամանկ է : Վրան զի , թէպէտև և լուենք դիտական բարձրագոյն կենդանութիւնը , ինչպիսիք են Ակաթիլ և Վրն Պիր Վոն Բաեր , որ զայն մեթոցին , բայց ներուի մեզ այսչափ միայն բուր . ամէն բանէ յառաջ՝ որ զարգացման մի քանի երեւոյթքն անանջաբ են Ռիչիլմոն ըսուածէն՝ որ պէտք է բազմանայ որպէս զի զորձարանաց և հիւ-

սուածոց սքանչելի ամբողջութիւն մի ձևացնէ : Ուստի յառաջ քան զորձանաւորութիւնն այս ըլիչն , զոր ըստ քմաց կը համարին մոնէր , հարկ է բազմանայ մոտուրայի կերպարանքը զգնելու համար : Բայց այս կենսաբանական պարզ իրողութիւնն որ և է ժառանգութիւն չի բովանդակի իւր մէջ : Գատարուրայի վիճակն զես ևս մարդկային սաղմին մէջ գտնուած չէ , որ ցարք ոչ որ տեսած է ասն օր յառաջ՝ յետ բեղմնաւորութեան - իսկ նոյնք երկբայական է ի մէջ ստնաւորաց ճագարին վրայ միայն , թէպէտ և շատ բնապատմութեամբ ամենայն իւրնամբով զայն փնտռել են ամէն տեղ , և այս բնապատմաց համար Կենայ վարժապետին Վան Պենեդեն Van Beneden խօսքն անսքեղ է :

Գ . Մանաւանդ թէ ըստ արդէ ծանօթութեան մարդկային սաղմն *Vescicola blastodermica* (blastula ըստ Հեկքելի) վիճակէն , յորում կ'երեկ տասներորդ կամ երկուսասներորդ օրն , սողակի կ'անցնի ի կերպարանս ողնաւորաց շուտ մը ձևացնելով նախնակամ խորշը . որ հնգեաստաներորդ օրն կը փակուի , ցուցնելով ողնայարական ատնաքի նախատարբերը : Այստեղ մարդկային սաղմն կ'անցնի փութով սյլ ամենայն վիճակներէն՝ զորս կը համարին տարվինականը իւր փաստը սերնդեան ի ստորնաբայն կենդանեաց սա ողնաւորս :

Ե . Սակայն Հեկքելի այս կենսածնունդ օրինաց չի հակառակիր միայն սաղմնային զարգացման վերջիչեալ իրողութիւնը : Այլ ուրիշ իրողութիւն ևս ինչեք նոս ցուցնելու համար իրին կարեւորութիւնը , և թէ որչափ հարկաւոր է ազատ քննադատական հողով ուսումնասիրել զայց : Սաղմաբան մընք ևս պիտի մարդկային սաղմին երկու շրջապատքն են՝ որ երևան կուզան երրորդ շաբթուս սկիզբը . և որովհետև այս շրջապատքը գետնաներէն սկսեալ յաջորդաբար ողնաւորաց մէջ կը գտնուին , հետեւաբար այս շրջապատից միջոց մարդկային սաղմն ևս պիտի մտնէ ի վիճակ զենոց : Բայց սատ կը պահանջուի միանգամայն զետոյ սեփական միւս զորձարանաց ժամանակակից զարգացումն , որ կը պակսի : Վրան զի այն ժամանակին զես ևս սիրտն է երկխորչային *biloculaire* , կամ ձկնային , և սաղմն կը մնայ ի վիճակի ձկան մինչև ցարբորդ շաբթուս , մինչև որ այն նշանաւոր իւրկային նախակիղզն (*archi - bronchioli*) կուտածները զգնեալ , որոց վրայ ալ շատ ըսելիք կայ : Ուրեմն զենոց յատուկ սաղմնային շրջապատք ձկանց յատկանիչներէն ազալ երևան կուզան , մինչդեռ հակառակը պէտք էր ըլլալ , մանաւանդ եթէ Հեկքելին չիմած ծննդաբանական նշանաւոր ծառայն ուշ գնենք :

Զ . Հակառակորդը կը համարին մեր այս ա-

սարկութիւնը լուծեալ լինելով թէ սաղմնաբոյն մշանք amnios և աղէփոր allantoide ըստ բաւականի չուսող երեւան կ'ըլլեն, վասն զի այդանպէս օգտակար են զաղմը պահպանելու համար: Բայց չեն անգործառնար՝ որ սաղմը դարձեալ կ'ըլլան այնչափ ատելի կենսական համակարգի տէրեացի միջին մէջ, որը ըստ իրենց կարծեաց, չարկ է ջընջուին գիտութեան մէջէն և մեքենական պատճառաց տեղի տան:

Մի այլ երոզութիւն: Ի. Եթէ յատկանիչը յառաջ կուգան կարգով մը՝ նախնական ձևերէ ի մերձաւորաւ գոյն ձևս մարդկային տեսակին, պէտք է սպասենք տեսնելու համար նախորդ տեսակաց յատկանիչներուն երեւնալը՝ մարդկան յատուկ յատկանիչներէն յառաջ: Այս ինքն, մարդս պիտի ըլլայ նախ կապիկ, ապա մարդ, և որով աստիճանային զրութիւնը՝ որ կատարինեան կապիկաց և մարդկան հասարակաց է, պիտի զարգանար զիս ևս ոտից ընդդէմադիր ըլծամասն չարգացած, և զիս ամենայն անդամներուն զարգացումն և համեմատութիւնն՝ զինքը մարդ չցուցած: Ընդհակառակի՝ ոտքն մարդկային ձև ունի ծննդնէ ի վեր՝ և նոյն իսկ յառաջ քան զծնունդն, և անգամայն համեմատութիւնը այն ժամանակէն ի վեր են մարդկայինը. մինչդեռ աստիճան քանի մը անիս յետոյ կ'երևին: Այդ ուրեմն յայտ մտայն ևս սաղմնաբանական զարգացումն կենսածնունդ օրինաց հաստատածին հակառակը կը յայտնէ:

Բ. Այս միայն է ճշմարիտ՝ որ այդպիսի օրէնք չկայ: Վասն զի մարդկային գործարանաւորութիւնն օրինօք և յատուկ կարգաւ մի կը զարգանայ, և եղջերուաբար մ'է մարդկան ծագումն ի ստորնադոյն կենդանի տեսակաց. և եթէ կայ նմանութիւն ինչ տեսակաց սաղմից մէջ, այս բանս կրնայ միշտ բացատրուիլ ծրագրի միութեան ընդարձակ օրինօք, որ կը տեսնուի և կ'ազդէ անոր վրայ՝ որ զայն կը քննէ առանց նախապաշարելի զաղմափաներու:

Թ. Եւ այս նկատմամբ Հեկքելին նշանակած ողնայարաւոր սաղմերու կերպարանքներն, որոց վրայ տարվիտակաբ կը յիշան մարդկային սաղմի նեո ունեցած նմանութիւնը հաստատելու համար, ոչ են ճշմարիտք՝ եթէ նոյն իսկ խորհրդով չեն այլայլեալք: Եւ յիշուի, կրնամք յիշել այլ նշանաւոր սաղմնաբանից նկարագրած պատկերքը, յորս կենդանական սաղմը նշանակուած են զարգացման միենայն կիտին մէջ, և այսու հանդերձ ունին այնքան տարբեր ձևեր՝ որ նոյն իսկ աղէտ մը կրնայ գտնուիլ գտնապէս:

Չ. Յաճախ ևս մարդկային սաղմի մէջ կարծիքն գտնել ստորնադոյն տեսակաց գործարաններ, որ անգամայն զարգացման մէջ եղած համեմատութեամբ թիւրթիւնք են. վասն զի այս անգամը միենայն ժամանակի մէջ չեն

մեծցած: Չոր օրինակ պոչին դէպքը՝ զոր տարվիտակաբ կը յիշեն արգանդամիջային կենաց մի քանի փոփոխմանց մէջ: Արգ կիւր coccyx ոսկրին ժամանակէն յառաջ ամբողջ ողնայարի նետ զարգացումը, և անոր զուրս ցցուած մասը՝ կը համարին իբր պոչային յաւելուած մի արգանդային ծայրից մէջ՝ որ յետոյ երևան կուգան: Եւ երբ այս վերջինքս կ'աճին, նոյն վերոյիշեալ ոսկրն կը կենայ հաստատուն այնպէս որ կանոնաւոր յարաբերութեամբ կը հաստատուին, և սույ կարծուածը բոլորովին կ'աներևութանայ:

Պ. Կարծեալ և ոչ պոչային ողնայարը կրնայ ապացուցանել ինչ. ուստի յայտ է թէ այնքան փնտրուած պոչն է այլ կ'ըլլէ բայց եթէ ժամանակէն առաջ զարգացած մարդու մը կանոնաւոր գործարանը:

Է

Ա. Նյակ ախտաբանութիւնը և աւելի բուժաբանութիւնը, տարվիտակաւորութեան օգնութեան կոչուած են, և այս կերպով չարորդ խումբ մի երոզութեանց կազմուած է, որը կամ ոչ լաւ մեկնուած կամ ըստ քնննուած չեն, և ի նպատակը բերուին երեւակայեալ շէնքին: Կ'ըստ ինչ անօգուտ տեղ, հրէշներու՝ որը ըստ անգամ յառաջ կուգան բարեկից մարդկանց ծնունդէն, պատճառ կը փնտրուի: Ասոնք առհասարակ atavisme դէպքեր են, նախնի կենդանեաց ձևերուն կը դանձանք՝ յորոց սերելա ենք: Անոնք որ այսպէս ըսին, ստիպուեցան սահմանափակուիլ ամենապակաս զեպքերու թիւոյն մէջ. վասն զի շատ յայտնի է որ բազմաթիւ հրէշներ, բնածնու կամ նետաւոր կենդանեաց նետ յարաբերութիւն չունին, որչափ ալ շատ մը բանագործչանք աշխատին նախորդ օտար և այլանդակ տեսակներ՝ յորոց պէտք են սերել: Առ այս բաւական պիտի ըլլար քննել նազարաւոր անգամանքներ, որը կրնան տեղի ունենալ էակին առաջին զարգացման ժամանակ, յառաջ բերելու համար ամենայն տեսակ անկանոնութիւնք. հանգամանք՝ որը կրնան ըլլալ մի միայն արեւեհասական թիւոցներու մէջ՝ փոխելով նախնիներու զէրքը և գանոնք մտքընկելու եղանակն: Ուրեմն տարվիտակաբ ամենայն հրէշաւորութիւնք չեն ուղեր փաստ առնուլ իրենց, և կը բաւականան միայն իրենց զրութեան նպատակուր հրէշներով և արդէն միայն ատաի կը հասկցուի իրենց ըստ զրութեան տկարութիւնը և խաբէութիւնը:

Բ. Փոքրագլուութիւնը microcephalia բուժաբանութեան զեպքերուն մէջ իբրև փաստ կ'առնուն տարվիտակաւորութեան, որ ամենէն աւելի ստուգութեան երևայթ ունի, մանաւանդ յետ կարողու Վոլկիթի ուսումնասիրութեան: Փոքրագլուութիւնը այլասերեալ մարդ-

կային արարածներ են, որոց ուղեղն ամենէն ստորնադոյն աստիճանի տարածոցով ուղեղներէն շատ վար է, գանկին համեմատութիւնը տաճ և փորք է, շատ անգամ ալ ասոնց մարմինը հիւծեալ և անհամեմատական է: Ուղեղի այսպիսի կազմութեան պատճառաւ՝ ասոնց մտաւոր, բարոյական և զգայական կարողութիւնք, բարոյական և զգայական խելօք, նուազը են, և գրեթէ միայն բուսական և անդրաբարձական գործոց մէջ կայացիր է իրենց գոյութիւնը, որուն համար ի բաց առեալ Ֆիլիքսիան պիտոյքը՝ չէր ինչ որ ցուցնէ անոնց վրայ կամը, զգացմունք, բանաւորութիւն մը և խղճմտանք: Շատ անգամ խառնակ և խորշիկ բնագործունք ունին, նազիւ կենդանական զգացումն, հանդիսական կամ տխուր՝ քիչ մը առան անոնց ուշադրութիւնը կը գրաւէ: Այսպիսեաց հիւանդութեանը պատճառ հարկ է ըլլան արգանդամիջային (intra-uterine փորութիւն) կենաց՝ առաջին անգամ ուղեղի զարգացման դադարում, կամ արտաքին արգելներ, որոնք յետոյ այսպիսի դադարումը պատճառած են, ինչպէս ժամանակէն առաջ գանկի ոսկրեաց իրարու նետ զօրումն, զըլտոյ ջրոզութիւն, որ սպա կ'աներևութանան: Ասոնց զըլտոյ ձևն, և մանաւանդ ուղեղի ճակատային ըլծակներու փոքրութիւնն կապիկները կը յիշեցնեն. և Վոլկիթ առաջին անգամ ցուցուց որ այդ հիւանդութիւնը յետադիմութիւն մ'է զեպ ի կապիկս՝ առհասարակ atavisme ձևքով. կամ լաւ ևս ըստ Հեկքելի կենսածնունդ օրինօք ուղեղային զարգացման դադարումն, մինչ սոյն գործարանը պիտի անցնէր կապիկական շրջանէն անդին: Չանգան մարդաբանը Վոլկիթ կարծեաց հետեցան, բայց պէտք է գիտնալ՝ որ ամէն տարվիտակաբ այս ելծակաւորութեան գլուխ չի ծնելին, և այժմ՝ անոր հակառակ կը խօսին երևելի անգամազընները և արտաբանք, ինչպէս Վերլու, որն որ ցուցուց թէ փոքրագլուութիւնը ուղեղը յայտնապէս հիւանդ է, վասն զի Սելլիոյ փորքը զարգացման միջոց զարդեր է, և բաց ձգել է սոյն մասերն որք ստուղ ուղեղներու մէջ գոց են: Այս բաները կապիկաց մէջ չենք տեսներ:

Գ. Ստոյգ է, որ փոքրագլուութիւնը ուղեղին արտաքին կերպարանքը և տարածոցը աւելի կապիկաց կը նմանին՝ քան թէ մարդոյ, ինչպէս արդէն Վիշոֆ գիտած էր, բայց ոչ սա և ոչ ալ Վոլկիթ և ոչ որեկեց տարվիտակա կըրցան գտնել՝ անոնց աւելի որ տեսակ կապիկաց նմանին: Յետոյ ինչ նշանակութիւն ունի այս նմանութիւնը՝ քանի որ այնքան կը տարբերին անոնց մէջ: Կապիկաց մէջ կ'ունեն, ուղեղային գործողութիւնը զարգացած են, ունին ուշադրութիւն, յատուկ գործոց զգացմունք, բարձրաստիճան զգայական կեանք մը, բոլոր մարմինը շարժելու եզական կարողութիւն մը, կը սիրեն իրենց նետ բանասար-

կեալ ընկերները և իրենց պահապանը, և իրենց կերակուր տուողը: Ոչ ինչ այսպիսի կը տեսնուի ի փոքրագլուութեան, որոնք և ոչ իսկ իրենց բուն ծնողը կը ճանչնան: Ուրեմն անբաններէն աւելի ստորին վիճակի մէջ կը գտնուին և ստորնադոյնք են քան զկապիկս: Կը յաւելուն ևս, որ փոքրագլուութեան սերնդեան գործերն կամ երկար չեն տեւեր, և կամ անպտուղ են. ուրեմն իրաւամբ Վերլուի կը գիտէ, որ եւթէ ըստ կարծեաց իսկ Վոլկիթի մարդկութիւնը ժամանակ մը գտնուած ըլլայ փոքրագլուութեան վիճակի մէջ, իրեն սերական գործողութեանց պակասութեամբ պիտի չի կարենար բնօրնանալ, մինչդեռ այսօր մարդկային բնութիւնն բարգաւաճեր է: Բայց տարվիտակաբ ասով չեն ուղեր նախապաշարուիլ, վասն զի ըստ իրենց սովորութեան, նախապիկ երոզութեանց կը պատասխանեալ կարիքի է փոքրագլուութեան ժամանակ մը սեւրած ըլլան:

Դ. Ուրեմն յետ արտաքին կարգի բազմաթիւ փորձերու ցուցուց, որ այդ զփոքրագլուութիւնն այլասերեալ և հիւանդ մարդիկ և թէ կողմնակի և ճակատային ոսկրեաց զօրումը նոյն է առողջ մարդկանց նետ, մինչդեռ մարդակերպ կապիկաց տարբեր է: Ուստի կը մերժեմ բացարձակ շիճմանքի նետ որ կ'իցէ նմանութիւն՝ զոր Լատոր կը պաշտպանէ (F. Regnault, Le microcephale, La Nature, 23^e année, 1895. Paris.)

Ե. Ուրեմն չկայ այնպիսի կապիկ տեսակ մը, որ փոքրագլուութիւնը նետ բաղադրուի: Ասոր վրայ աւելցնենք Ռանքի (Ranke, L'uomo, հատոր Բ, երես 365, Թուրին 1892) յարմար կերպով ըսած թէ, բովանդակ մարդկութեան մէջ չկայ ժողովուրդ մը, և ոչ ցեղ, և ոչ առանձնացեալ ընտանիք մը, որ անոնց մերձեանայ, և որեկեց նկատմամբ կարենայ համարուիլ իբրև միջանկեալ մարդու և կապիկն մէջ: Յարդ մէջ բերուած իրերէն՝ զիւրին է հետեցնել, որ եթէ ուղեղն և փորձատական ճիշդ մեթոտին յարմարիլ, փոքրագլուութիւնը պէտք են համարուիլ իբրև հիւանդ և այլասերեալք: Եւ երկայ վիճակի մէջ որովհետև իրենց նմանոց սովորաւոր մը կը պակսի, արդի տարվիտակաբ պիտի ուղեղնան սովորական մի միայն տխուր երեւակայեալ որ նաև այս յատկութիւնը ունենայ, և յետոյ պիտի ուղեղն պնդել, որ այն տիպար իբր իրեւ է, և ի զուր պիտի շնանն, զոնէ ի բրածոյս գտնել անոնց հետքերը. և այս բանս միայն իրենց սեփական է, և ոչ գիտութեան, որ նաւաստարիմ քննել է և թարգման իրագլուութեանց:



երես 226) 1250, ըստ Հիքսլեյի (Huxley, Evidence as to man's place in nature. Լոնտոն, 1875 երես 156) 1518, ընդունա- կութիւն մը անտարակոյս փոքր, բայց ըստ Շաֆթսուզէնի՝ այնքան ընդունակութիւն ու- նին Մայէզդանց գանկերն: Գարծեալ եղան ումանը որք տարակուսեցան այսքան փոքր ընդունակութեան վրայ, որ գէթ կրնայ ըլ- լալ այն գանկին մնացորդին վրայէն հա- շուէրով և ոչ ընդհանուրը ի միասին աւ- նելով: Վասն զի համեմատական ցուցակ- ներով չափելով անոր հորիզոնական շրջա- պատը, 527 հազարգամերէ մ, մինչ- ղեռ պէտք էր 1352 խորանարդ հարիւրորդ- ղամեզր ունենալ, առաւել քան արդի վե- ղին Պաւիերայի բնակչաց գանկի ընդունա- կութեան միջին հաշիւը: Բոլոր այս չա- փերը՝ Նէանտերթալի գանկը աւելի բարձր աստիճան կը ցուցնեն քան զկապիին, որուն կ'ուզէին մերձեցնել զայն: Յետեւ ևս՝ որ անոր ակնհակադէ մեծ կամարները երեւելի մար- ղաբաններ ստուգած են՝ Պրիքսլեյ և ձիւլ- ռալթարի բնակչաց վրայ: Եւ բաց աստի, զայն բազմաթիւ քննողներէն մին՝ մինչև իսկ անոր վաւերականութեան վրայ տարա- կուած է, այլ ո՞վ անոր վրայ վերանշառ- ներ գտնաւով, կը կարծէ զայն 1815ին մե- ռած խաղախներէն և վերջապէս Վերիով, որ հնէաբանական գիտութեան ամենէն ա- լելի ներհունն է, անոր վրայ շատ մը հի- ւանդութեանց նշաններ գտաւ, այնպէս որ անոր վրայ վիճաբանելու տիրութիւն ան- ղամ ջնջեր է, ուստի լրագրոյն է որ տար- վինականը այլ ևս ասոր վրայ չիտնին (G. Ranke, L'uomo, Թուրին 1892, Հատ Բ, երես 449): Պիտի յաւելումը չամառախի՝ որ եթէ մարդկային գանկին վրայ փնտնեցին կապիային գանկի յատկութիւններ, նոյն- պէս զանց չըրին փնտնել մարդկային յատկութիւններ կապիաց գանկերու վրայ: Ասոր պատճառ եղած են Գազդիոյ մէջ Սուրբ-Կոստան միջնահակ հողին Անտառա- կապիի Dryopithecus մնացորդներն, որ ի սկզբան համարուեցաւ իբր ամենէն բարձր ղասու և բարձրովին կատարեալ բրածոյ կա- պիին, իբր սոոյգ նախորդ մարդոյ, և մինչև իսկ զայն բանաւոր համարուեցան և նկրտակ թէնէյի մէջ գտնուած յղկելու խիճերու: Բայց երբ նորս կզակը քննուեցաւ, հարկ եղաւ որ այն աստիճանէն ինչպէ և ամեն մարդկերոյ կա- պիիններէն ալ վարդասուր (A. Gaudry, Mam- mifères tertiaires Փարիզ 1893 երես 256): Կզակին ձեւը յայտնի կը ցուցնէր՝ որ յո- ղաւոր իտքերը արտաբերելու շարժուն լե- ղու չէ ունեցած. և չունենալով իտակելու կարողութիւն, բանաւորութենէ ալ զուրկ էր. որով թէնէյի աշխատութեւ խիճերուն տը- րուած կարեւորութիւնն՝ իբր այժմ կրանցող, զորս յայտնուցն՝ արքայն Պոլթուն, թէ՛ վերջը իմացաւ որ ոչ միջնահակ հողի, այլ տեղափոխեալ գեանակի կը վերաբերէին:

18091
1876

Ա. Բնական գիտութեանց ամենէն արդին, երկրաբանութիւնն ևս՝ յօսնութիւն կոչուե- ցաւ մարդու կենդանիներէն ծագման: Բայց յայտն ևս ի նախապաշարմանց և ի կրից ազատ դիտութիւնն, բնագիտութեանց հաս- տատելու թէ այլ կո իրողութիւնը և այլ է միևնույնութիւնն՝ զոր վերջեց որ և է կեր- պով տալ անոնց: Նիւթապաշար երկրաբանա- կան գիտութեանն այս ազարդեւն զործը կը պահանջին:

Բ. Պէտք չէ զարմանալ՝ եթէ երկրաբանու- թեանն պահանջուեր է մարդու կենդանեաց- մէ ծագման անպարզական փաստներէն մին: Վասն զի, զիցուր թէ ստորին տեսակներէն յեղաշրջումը՝ երկրաբանական դարերու հա- մեմատ ժամանակներ պահանջէ, այն ատեն միայն բրածոյ վիճակի մէջ կարելի պիտի ըլ- լար միջնակեալ տեսակ գանկի, իբրև զօղիչ մանեակ՝ մարդկան և կապիաց: Եւ ահա ամե- նայն տարվինականը՝ ոչ շատ հին դարերու գեանակները կը պեղեն կը պրպըանեն, կը վիճաբանեն մարդու և կապիաց բրածոյից վրայ, և այսպիսի մնացորդը՝ մարդկա- յին ստորնագոյն ղասակապիին հետ կը բազ- ղատեն, կը նշանեն, կը վերածեն զբո- նուած ամենաչնչին տարբերութիւնները: Ամե- նէն աւելի ծանօթ է այն, որոյ վրայ հա- կածատութիւնը մինչև ցարդ կը տեսնու- զանկն կամ լաւ ևս բսելով գանկին մարդ Նէանտերթալի ըսուած, որ 1857ին զբո- նուած է Նէանտրի ձորոյն Տրեսելտորֆի մօտ ի Գերմանիա Ռինանայ՝ քարայրի մը մէջ: Այս ծերու գանկէն մնացած էին միայն հա- կատակը, ականակազի կամարը, մաս մի կոյմնական և սկաւառական ոսկերաց: Պատ- ճառք, որովք զայն մարդկային գանկերու մէջ ամենէն աւելի կապիին մերձաւոր համարե- ցան, եղան իբր սակաւ ընդունակութիւնը, ձակաին ամենացած և զգալի կերպով ետե- ծած ըլլալն, և ամենէն աւելի ակնհակազ- ճի և ձակատային խոռոչի ոսկերաց զուրս ցցուած ըլլալն: Սակայն այս յատկու- թիւնը յետոյ մանրանաւ քննադատութեան ենթարկուեցան, շարունակաբար երեւելի մարդաբաններէ ուսումնասիրուեցան, բազ- ղատուեցան կենդանի և՛ բրածոյ ամեն մարդկային ազգի վայրենեաց և քաղա- քակերթ մարդկանց գանկին հետ, և այն մեծ կարեւորութիւնը՝ զոր կուտային ի- բրև կապիային յատկութեանց՝ ուսմանց յա- ռաջափմելուն կամայ կամայ իտակելու: Ներքին ընդունակութիւնը հաշուելով գան- կին այդ փոքր մնացորդին վրայ՝ էր ըստ Բաթթրֆաթի 1220 հարիւրորդամեր խո- բանարդ, ըստ Գանստրիինի (G. Cane- strini, La teoria dell'evoluzione esposta nei suoi fondamenti, և այլն, Թուրին 1877

Գ. Մի քանի տարիներէ ի վեր՝ մարդու և մարդակերոյ կապիաց մէջ միջնակեալ գրա- նուած բրածոյ էակներու գինգակ խոլոպը- կութիւնն՝ նոր կերպարանք ստացաւ Տօք- Տրեսելտա հողայնացի զինուորական բժշկի ջանիւրը՝ ձավայնի մէջ գտնուած մը քանի բրածոյից պատճառաւ: Նախ հարկ է ըսել որ աստի թէ՛ առաջ, իրողութեանց պակասը լրացնելու համար Հեկքել իւր հնարած բան- ղազուշեալ նախատեսութեանց մէջ ըսած էր, որ մարդու անմիջական նախորդը պէտք էր գտնուիլ հարակային Ասիոյ մէջ, չոր- բորդակ խաւէ թէ՛ մը աւելի առաջ ձեւա- ղին ձեւը և անգամայն համեմատութիւնը կան- իտաւ ըսած էր, անուրի կոչելով Ուլիլի կապ- կամարը (Pithecanthropus erectus): Եւ այս առաջին անգամն չէ, որ տարվինականը կ'ողերին իրենց գաղափարներով և նոյն իսկ նախատեսութիւններ կ'ընեն, յա- սալով որ յետոյ իրողութիւններ գտնուող պիտի ստուգեն. նոր Լոքլէրիներ, որք Պիտրոն մուրդակին գիւտը կ'ուզեն կրկնել: Հեկքելի նախատեսութիւնը իբր լուրջ բան մի ընդունելի եղաւ իւր վրայ սքանչացող- ներէն. և անաւտիկ Տրեսելտա ազգին ան- ղին կը թափառի քարոզելու՝ իբր թէ նորս նախատեսութիւնը իրողութեանց կարգը ան- ցած ըլլայ, վասն զի ի ձավա ինքն յա- ղուրի է գտնելու մի քանի չորբորդակ ստու- նագոյն իտակելու կայտերու մէջ տոսնձին ազգի ակոյց մը, յետոյ գանկի սկաւառակ մը, դարձեալ ազգի ակոյց մը, և մի քանի մանու վերջը նոյն տեղին 20 մեզր (Տես M. Manouvrierի Փարիզու Մարդաբանական ընկերութեան առաջին նիստի 3 Յունուար 1893 տուած տեղեկութիւնը) — Le pro- grès médical, III^e sér. T. I, n. 2) հետու (ուշադրութիւն զրէք 20 մեզր հետու) բարձուր մը: Այս գիւտը անմիջապէս մէջ աշխարհիս ամեն կողմը շրջան ըրաւ: Վեր- ջապէս Մարդ-կապիկի գտնուած էր: Եւ այն նա առաջակական շրջանէն կ'ընէ լուրջ գիտութեան կարգ կը մտնէ. և թէ- պէտ ուսմիկն անտեղեակ է այս բանին՝ բայց սակաւաթիւ գտնուող ոգևորումն այն առ- տիճանի հասաւ, որ անոր նմանն երբեք տեսնուած չէ և ոչ իսկ կատարութեան գէտ պատուաստի, կամ մաշկթափ չիճի sérum antidiphthérique, և ոչ իսկ Ռոնթգէնի ճառագայթներու գտնուելուն համար: Մար- ղաբանը, երկրաբանը, հնէաբանը, մար- ղաբանական ընկերութիւնը Պերլինի, Փա- ռիզու, Փլորինիոյ, այս գիւտիս համար մասնաւոր նիստեր ըրին, Լէյպպից կենդա- նաբանական ժողովը՝ երկար հակասաու- թիւն մը նաւերից անոր: Վէճը և հրատա- բակութիւնը իբրբուր յաջորդեցին նոյն իսկ սաստիկ յուզումը լի փոփոխակի ամենա- չիբմ հաստատութիւնը և ժողովներ տես- նուեցան: Այս ամենն արդէն կը ցուցնեն՝

Թէ այնքան յուսալիք միջնակեալ էակը ա- մենուն յայտնապէս չէր երևնար: Գարծեալ, բաւականն աւելի զիբահասաւ պէտք է ըլ- լալ՝ ըսելու թէ այս մնացորդը, որոնք իրարմէ 20 մեզր հետ կը գտնուին, մի և նոյն էա- կին կը պատկանին, այս տարակոյսը ոչ միայն մենք կը հանենք, այլ նաև երեւելի երկրաբանը, (A. Issel, Compendio di geo- logia, P. II, երես 50. Թուրին 1897, և M. Neumayr Storia della terra. Հատ- Բ, երես 547. Թուրին 1897): Այսու հան- ղերմ մեզ գարմանը չի պատճառեր այս բանն, վասն զի անոնք որ լուրջ կերպով ցարդ ձաւայի Մարդ-կապիկը ընդունեցան՝ զուտ կենդանաբաններ կամ մարդաբաններ են, որք այդ ոսկերներ ղիտեցին՝ ինչպէս որ իրենց ներկայացուցին այլք, առանց որ և է քնն- նադատութեան, որուն երկրաբանը ենթ- արկելու է զբրածոյն, առանց յանդգնա- բար եզրակացութիւն հանելու:

Գ. Այս կերպով արամբանելով՝ աւելի ղերին և աւելի խելքով՝ պիտի ըլլայ՝ սակից վերջը միջնակեալ կենդանու մը բնծայելու, զոր օրինակ, շան և ձուռ մնացորդը՝ որոնք իբրբուր հետ խառնուած են նոյն բովին մէջ: Յետոյ տարբական երկրաբանութիւնն կը սորվեցնէ, որ փոխադրական գեանակնե- լու մէջ գտնուած բրածոները՝ մեծապէս աւանդական կարեւորութիւն մը ունին, և ա- նոնցմէ եզրակացութիւն մը առաջ բերելու համար զգուշութիւն հարկաւոր է: Արդ ձավայնի մարդ — կապիկի ոսկերութիւնը ղաւ- նուեցան գիտի մը երկայնութեամ վրայ իմային խառն մը մէջ, կապիկու մեծաւ մասամբ կայտ մը անդեքարեան (antésite) և հրաբխային նիւթերով: Ուրեմն այսքան ծանր եզրակացութիւն մը հանելու համար շատ զգուշութեամբ առաջ երթալու է: Շատ լաւ կը տեսնուի, որ նաև երկրաբանութեան տարրական կանոններն իսկ, որոնք նաև արամբանութեան կանոններ են, աւելորդ կամ անօգուտ կ'ըլլան՝ եթէ այսպիսի տար- տամ գաղափար մը պիտի պաշտպանուի: Բայց սակայն տարվինականը գտնուած գան- կի սկաւառակին տափակութիւնը և ընդունա- կութիւնը ղիտեղով՝ զայն կ'օրինի և մար- դուս մէջ գտնուած միջնակեալը համարե- ցան. ումանք սկզբաները՝ մարդկայնաց շատ նմանցուցին, և այլք՝ կապիկու. բսին ևս թէ՛ բարձուրը՝ մարդկային պէտք էր ըլլայ: Աստի եզրակացուցին, որ այդ էակը կան- գուն կեցուածք ունէր, բայց ուղիղի և գանկի կողմանէ՝ կապիկի մ'էր: Արդ քսան մեզր հետաւորութեանն ուշ զննելով, որ ըւ- նոյն ինքն Տրեսելտա իւր առաջին քննու- թեանց մէջ ստարակուսի մէջ ձգեց, ղիտեղի է, որ գանկը կրնայ ըլլալ փոքրազիւր մը, և թէ յամենայն գէտայ միայն վերին գանկն չի բոււեր ամբողջ գանկը ձեւացնելու համար. և թէ միայն երկու աստիճանը այդքան ծանր հեռութիւն մը չեն կրնար հուսալի ը-

ներ. և վերջապէս յամենայն դէպս ասոնց վրայ կան շատ իրարու անհամաձայն կարծիքներ, և հետեւաբար անոնց վրայ չի կըրնար որ վատնէ ըլլայ: Բարձրակրին վրայ ամէնքն ալ համաձայնութեամբ գտան հիւանդութեանց զանազան հետքեր՝ որ ոսկրը տձև ըրեր են, որով դժուարաւ կրնայ որ սակէ ալ փաստ ի մէջ բերել: Միով բանիւ, նորաբար մնացորդները քննողաց և ուսումնասիրողաց մէջ կան ամենահզօր հակառակողք՝ որոնք չեն ընդունիր իբր թէ այս մնացորդը ունենան սեռակցաց անցման համար պահանջուած յատկանիշքը: Ոմանք կը համարին զայն մարդկային գտնել, զայց փորձազիտաց, այլք կապկային կը գնեն, իսկ բարձրակրը անասարակոյս մարդոյ կը համարին: Այս հակառակողաց կարգէն են Վիրսով, Միլն Երզուարդ, Թիւրներ, Քրոզը, Մաչի, Թօզէնպերկ, Ֆլուեր:

Եւ Արդ ճապարի կապկամարդը նախ հարկ է լաւ քննել, և ոչ թէ մէկէն ընդունել իբր այնպիսի ինչպէս որ տարվինականք կ'ուզէն հաւատացնել մեզի: Լուրջ, և ոչ թէ այն իմաստակ և մոլեռանդն գիտութիւնն զուրկ է ի փաստից՝ որը կարենան զայն ընդունել ընել իբր մարդկանց և կապկաց մէջ միջանկեալ էակ մը: Եւ եթէ այն ամենազոյզն մնացորդը ամենայն ոք իբրև միջանկեալ էակներ ընդունի, կը մնայ տեսնել թէ արդեօք տրամաբանութիւնը կը ներէ, որ այս ամենասակաւ մնացորդներէն ըզմանալի կ'մտիքի մը գոյութիւն հիւսկայիննը. և վերջապէս դեռ ևս ապացուցման կարօտ է կապկաց և երևակայեալ էակին, և ասոր մարդու հետ ունեցած կապակցութիւնն:

Թ

Ա. Կ'առարկեն մեզ թէ կը մերժենք մինչև ցարդ կենդանեաց ծագման մասին եղած գիտական բացատրութիւնը, և անոր տեղ կը դիմենք արարչական զօրութեան մը որ ամենայն հակաճառութիւնքը, և մտաց ճիգը կարճի կը կապէ: Բայց կը սխալին: Վասն զի թէ կենդանեաց և թէ մարդկանց ծագման նկատմամբ եղած ենթադրութիւնը ազատաբար կը քննադատենք, և տեսնելով որ զուրկ է այն՝ գիտական ենթադրութեանց համար կարևոր պահանջներէն, զայն կ'ամրոցենք: Սակայն ինչպէս փոփոխականութեան, բնական և սերական ընարութեան, կենաց պայքարի օրէնքները ընդհանուր տեսակէտով ճշմարիտ են, այսպէս անտարակոյս կը հաստատենք՝ որ նոյն օրէնքներն կը տանին ըզմանց ցեղերու ձևաբանութեան, տեսակաց և ասոնց ապրած շրջապատին մէջ եղած հաւասարակշռութեան: Բայց քննութիւնն մեզ կ'ուսուցանէ որ սակից անգին չեն անցնիր այն օրէնք. ուստի հաւատարիմ մնալով

փորձառական գրութեան, տեսալի մը ուրիշ տեսակի յեղաշրջման վարդապետութիւնը կը մերժենք, և այս բանին համար պէտք չունինք գերբնականի, և ոչ վարդապետութեան մը, այլ մեզ բաւական է իսկը և միտք: Բայց քանի որ խօսքը կենդանեաց և ոչ մարդուս վրայ է, նոյն իսկ յեղաշրջման տարի կողմերը խոստովանելով, կան որ կը նկատեն դժեղաշրջում իբրև օգտակար միջոց մը, զանազան իրողութեանց ուսումնական բացատրութեան համար, և իբրև լաւ վարդապետական հնարք մը, որով կրնան հաւաքուի իրողութիւնք և օրէնք, և ամենայն ինչ ներկայանալ մեծաւ պարզութեամբ և մոլեթեամբ պատճառի: Իսկ եթէ կը պահանջեն զայն ընդունել ընել ամենուն իբրև ստոյգ և սպառնացեալ իմ մը, միշտ ուսումնական ազատութեան և անկախութեան գործ մը պիտի կատարենք, ընդդէմադրելով շատ մը հակառակ իրողութիւններ և նոյն ենթադրութիւնը իբրև արդար արժէքին մէջ ներկայացնելով: Ուստի պէտք է սպասենք ուրիշ ենթադրութեան մը՝ որ իրողութեանց հետ աւելի յարմար ընթացնայ: Եւ որովհետև կը պակսի այդպիսի ենթադրութիւն մը, կը նախադասենք, միշտ իբր գիտնականք և ընդգեղք, խոստովանելու մեր տպիտութիւնը: Լաւագոյն է ըսել ՉԵՄ ԳիՏՅԵՐ, ինչպէս զայն գերազանցապէս ըսաւ Քաթթիֆ, քան թէ պայտապանել այնպիսի ենթադրութիւններ՝ որը հակառակ ըլլալով շատ մը իրողութեանց, գիտութեան աւելի վնասաբեր են քան թէ օգտակար: Եւ քանի անգամ ընադեղը չէ ընտրատեալ խոստովանելու՝ իր մը մըքննաբար քննադատելու անկարողութիւնը: Ո՞վ կը յանդգնի՝ օրինակի համար՝ ենթադրութիւն մը մէջ բերել՝ բացատրելու համար մարդկային մարմնոյ գործարանաց և կրից մէջ եղած յարաբերութիւնքը: Գիտենք թէ ինչու համար զայրոյթը լեարդի վրայ, երկիւզը սրտի վրայ, ցաւը առագաստի և արտաստեաց գործարանին վրայ կը ներգործեն և կ'ազդեն: Կոյն աստղաբաշտ մը, որ ստիպեալ համարի ինքզինքը ընդունելու իբրև լուրջ բանի՝ չըրատի ջրանցքները, գիտաբար կ'ազդուի ինչն, կամ օգնութեանց ստուգներու հետ ունեցած կապակցութիւնը բացատրելու համար եղած ենթադրութիւնքը: Եւ ընտրուող գիտնէն թէ ինչ պատճառաւ սաղմի անձանի ծամանակ արու և ոչ եղ, կամ էգ և ոչ արու, և թէ գրեթէ նոյնաթիւ արու և էգ կը ծնանին: Ինչու՞ զմեզ պիտի պարտաւորեն ընդունելու տարվինական ենթադրութիւնքը: Եւ եթէ մենք վրաս քննութեամբ մը՝ օրինակի խօսքերուն մը պայ չեմք ուզել երգնուլ, ընդգիտնալով այս նոր տեսակ ըրու նադատութեան, ինչ իրաւամբ հակառակորդը զմեզ կրնան ծագրել, մինչև իսկ գիտնոց և բը-

նագիտաց անունն անգամ չուղելով մեզ տալ: Եթէ երկարաբան մը չուզենք ընդունիլ կենդանական շերտութեան ենթադրութիւնը և միւս ենթադրութիւնները, որոնցմով կը ջանամք ընցարարել հրաբուխները և երկրի կեղեկն ձևանալը, որպէս զի նա ինքզինքը չուզարնէ՝ քննելով ստուգուած իրողութիւնքը և օրէնքները, ոչ ոք ինքը կրնայ մեղադրել: Եւ սակայն կեղերնական շերտութեան ենթադրութիւնն՝ տարվինականութեան պէս իրեն հակառակ իրողութիւններ չունի, և ի հակառակէն ալ ոչ ոք ընտրատեալ է աս այն՝ այնպէս որ հակառակելով անոր՝ ծագու ենթադրութիւնը ըլլայ: Եւ եթէ այն երկարաբանը ընդհակառակն՝ մոլեռանդն պայտապան ըլլար կեղերնական շերտութեան ենթադրութեան քննողութիւնը, այն յայտնի և ապացուցեալ վարդապետութիւն մը իբր համախոհները պիտի չի ծայրէն գիտքը: Մինչդեռ յեղաշրջումը կամ տարվինականութիւնն հրազարակուած է յանդիմանի՝ իբր ստոյգ և ապացուցեալ, և աս այն կը ստիպեն զամենք Հեկթել, Մոսէլի, Պիւրսեն, Կաստի, Հիւբըէյ և այլք՝ և բաւական է կարգալ իրենց գրքերը՝ այդ վարդապետութիւնը պայծառ կերպով բացատրուած տեսնելու համար, մինչդեռ և ոչ նոյն ինքն Տարվին իբր բաղմանիւ գրոց մէջ անոնց պէս իբր վարդապետութեանց մոլեռանդն չէր իբր, նոյնպէս ուրիշ շատ ողջ և մեռած ընադէտներ: Եւ այս վերջինքս, ըստ արգարութեան հարկ է խոստովանել, կը սահմանափակուի՝ տարվինականութիւնը պարզապէս իբրև ենթադրութիւն ընդունելու, վասն զի ուրիշ գիտնականապէս հակաճանաչել ենթադրութիւն չունին:

Բ. Իբրև գիտնականք, անոնց, որ զմեզ կը մեղադրեն՝ տեսակցաց և մարդուս ծագման միակ մեքենական բացատրութիւնը մերժելուն համար, կ'աղեք. Մեզի առաջարկեն մը այլ ենթադրութիւն աւելի ի ներդաշնակութեան ստոյգ օրինաց և ստուգեալ իրողութեանց հետ, և այն աստի կը սկսինք նորեն հակաճանաչել:

Գ. Իսկ իբրև հաւատացեալք, կը պատասխանենք, որ եթէ զմեզ քննադատելու իրաւունք չունին, սրջամբ ևս ծագրելու, եթէ Արարչին ուղղակի զօրութեան կը դիմենք այնպիսի ինչոյց մը մէջ, որոյ մասին գիտութիւնը գիտաբանի ենթադրութիւն մը միայն կրցիլ է տալ: Եւ ենթադրելով ևս թէ, այս ինչոյցն տարվինական ենթադրութեամբ լուծուած ըլլայ, այդ մեզ ըսաւ արդեւ պիտի չըլլար ընդունելու՝ որ Արարչից գործածելով ընտանի պատճառներ, իրմէ ստեղծուած նիւթն զամար իրեն դրած օրէնքները կարգաւորած ըլլայ այնպիսի եղանակաւ մը, որ յարմարեցնէ այս պատճառները գործարանաւոր տեսակցաց ձևացման: Բայց, սակից տակաւին շատ հեռի ենք: Եւ եթէ իբրև հաւատացեալք՝ կարենամք անտարբեր ըլլալ տարվինականութեան անբան տեսակաց ծագ-

ման մասին, ուսումնական տեսակէտով միայն մերժելով զայն, սակայն չենք կրնար նոյնը ըսել՝ եթէ մարդկային տեսակին ալ ջանան յարմարեցնել այն ենթադրութիւնը: Մարդուս ծագումն, իբր գերազանց ընտելութիւն, իբր արարչութեան մէջ զբաւած տեղն, իբր բարոյական և ընկերական պարտքերն, անդրգրեկամական վաստանը, ըզմեզ շատ իսկ կը համոզեն, ուղղակի ստեղծման վարդապետութեան բանաւոր լինելուն: Հակառակորդաց չափաւորներէն մին, զմեզ իրենց վարդապետութեան իրջանին մէջ ձգելու համար, կ'աշխատի ընտրուելու մեզի որ իրենց վարդապետութիւնն՝ կրօնից հակառակ չի պատերազմիր, և թէ հաւատացեալք կ'անհրաժեշտ այնքան անվատահոգեալք նայելու անոր վրայ: Այլք ևս կ'ամբաստանեն զմեզ՝ իբր թէ կրօնական զայտին վրայ կը հանեմք այն խնդիրը, և որով տարբեր կերպարանք կ'առնու այն: Բայց արդեօք մեր յանդանքն է, եթէ նա այն կէտն հասաւ որ հաւատաց վնաս կը բերէ: Կարճեալ շատ ժամանակ չէ, որ յեղաշրջման մի քանի վարժապետք զայն զէնք այն իրենց՝ մեր հաւատքը ազարատու համար: Մոսէլիի գրածն յարմար է մեր ըսածին. « Իւրաքանչիւր ընկան կամ ընկերական պատճառ՝ զոր գիտութիւնն կը յայտնէ՝ առաստելական աստուածութիւն մը կը տապալէ, զոր մարդկային գիտութիւնն հնարէ է » (Morselli, *La natura e l'incivilimento*, Թուրին, 1879, էջ 11.): Եւ մեծ տարվինական Պիւրսենը՝ յետ պնդելու մարդուս կապկային ծագման խնդիրը կ'ըսէ. « Կրօնքի և գիտութեան մէջ յաւիտեանական կերպով տարբերեալ մարդուութիւնն կը յարաբերուի մարդուս, բարոյապէս և ֆիզիքապէս՝ այնքան աւելի որչափ կը յարի գիտութեան »: Եւ սակից աւելի. « Գաստրոֆիլոսոֆիան հիմն պէտք է ըլլալ գիտութիւնը և ոչ հաւատքը. հասարակաց վարժարաններու մէջ կրօնքն միայն պատմական կերպարանաց ներքոյ պէտք է երևնայ »: Եւ դեռ աւելի չարագոյն, քրիստոնէութեան վրայ խօսելով, այդ վարդապետութեան նկատմամբ տգէտ և անպարեշտ կ'ըսէ. « Գաւով անոր որ յանդիմանի քրիստոնէութիւնն կ'անուանի... իբր ամեն մասը, իբր ամեն վարդապետական նիւթերը այնքան պայծառ են, այնպէս անհաշտ և տարբերակ կերպով նկատուող նոր գիտութեան սկզբանց և յարթանակին, որ անոր վաստանական վիճակն ապագային մէջ պարզապէս կերպով կ'ազդուի » (Büchner, *L'homme, selon la science*. Փարիզ 1872, էջ 583, և այլն): Պիւրսենի գրքին լի է այսպիսի գուշակութեամբ և անգլաւորութեամբ: Գետոյ Հեկթելը՝ Եկեղեցւոյ և անոր վարդապետութեանց, և աստիճանաւորաց զէմ ամենամեծ արամարհանքը, ամենագուտ համայնաստուածութիւնը ամբողջ իբր բնա-

կան՝ ստեղծման նպատակով մեջ պաշտպանելէն վերջը՝ այսպէս կը կնքէ իւր վերջին ճառարտութիւնը. « Բնական միայնական կրօնքը, զոր մենք պէտք ենք սպառաշին ստուգ կրօնքը համարել, բոլոր եկեղեցական կրօնքներու պէս չի նահատակիր ո՞ր կէ է բնական ծանօթութեանց՝ այլ անոնց նեա դաշն կ'ընթանայ: Մինչդեռ սոյն կրօնքները նստատեղ են միշտ խաբէութեան և աւելորդապաշտութեան վրայ, ընդհակառակն միւսը կը հիմնուի ճշմարտութեան և գիտութեան վրայ: » Եւ քիչ մը վար. « Փիլիսոփայութիւնը գիտութեանց թաղուհին... կաթողիկէ վարդապետութեանց և անոնց Սրբաբնութեան ատենին տարածուելով՝ Եկեղեցւոյ կայր դարձի մը եղաւ: » Յետոյ ամենքն ի մի բերան կը կրկնեն. Ուր գիտութիւնը կը սկսի, կը լմնայ հասարակը: Եւ այսպիսի վկայութիւններ կրնայինք դեռ յառաջ բերել, վասն զի կան չարագոյն և աւելի յարձակողական իմաստներ քան վերայիշեալ հեղինակաց իմաստներն:

Գ. Այսուհետև տարվիականք թող դան ըսեն մեզ, որ իրենց վարդապետութիւնը կրօնքի ամենեւին վնաս չի նասցնեն:

Եթէ մեր յօմարտութեանց ամենասիրելի մասին վրայ կը յարձակին, ո՞վ զմեզ կրնայ զրկել ինքզինքնիս պաշտպանելու պարտականութենէն և իրաւունքէն:

Ժ

Ա. Մեր նահապետաց ամենէն չափաւորը կը պնդեն, որ կրօնքն կ'անխրաւի իւր անչարժուութեամբ և գիտութեան պահանջողութեանց և զարգացման չնպաստակելով: Կրնա՞ք երեւակայել, ո՞վ ընթերցողը, կրօնք մը որ ըլլայ միանգամայն հրաշալի մերինին պէս, և թէ իւր վարդապետութիւնը և վճիռները, որք բարոյական և ընկերական կենաց հիմունքն են, փոփոխուին սոսկ ենթադրութեանց նետելով, զոր ամենայն ոք կըրնայ նախել, և որք նազիւ կ'իմացուին թէ կան և ահա կ'անհետանան: Բաց աստի թոյլ տուէք մեզ նպատակաւ փոստ հանելու՝ համեմատելով մեր կրօնքը այլ գիտութեանց և ենթադրութեանց հետ, ինչպէս մինչև ցարդ ըրինք: Ո՞վ չի յիշէր այն համբաւը՝ զոր այս գարուս կիսոյն ունեցաւ Լատիստի երեւելի դրութիւնը, արեւակնային դրութեան ծագման և զարգացման մասին: Չեր մէջ շատերն գիտեն՝ թէ յանուն սոյն դրութեան սրջափ յարձակուունք եղան ընդդէմ կրօնից և Ս. Գրոց: Արդ զրիթէ 70 տարի խրոխտ կեանքէ մը վերջը, այս դրութիւնն ևս ինչպէս աստղաբաշխական գիտերու ծանրութեան և Ֆայի ուշիմ ուսումնասիրութեան ներքև, այնպէս որ եթէ իրեն պատիւը պահող աստղաբաշխ կամ երկրաբանն այժմ կը զգուշանայ իւր զաստուութեանց մէջ

բացատրելու զայն, ո՞րչափ ևս իւր դրոց մէջ զայն զարգացնեն: Լատիստի դրութիւնը խաւարելու նետ է: շատ և շատ դրութիւնք այժմ պարզապէս կը յիշատակուին. մինչդեռ նաւասքը կը մնայ իւր վարդապետութեամբ և վճիռք իբր յաւիտեանական լոյս մը, որ կը լուսաւորէ միաբերը, կ'արծարծէ սրտերը, և յասպարէլ կը կողէ, ոչ գիտութիւնը, որուն ինքը լինամի չէ, այլ գիտնականքը՝ որ զայն իրենց պղտոր կրից նպատակ կ'անուսն:

Բ. Բայց նու լուսութեամբ չեմք կրնար անցնել, առանց յիշելու մի քանի տարի ստալ նաւասքը և գիտութիւնը իրարու նետ դուգելու համար կատարուած փորձը, որով յետ յուսահատելու կրօնքի նպատաներէն, և գիտութեան ընթացքին՝ ընդդիմաբար անկարելի համարելով, պնդելին թէ կապիկ մը զարգացած և կատարելագործուած մարմնոյն մէջ՝ հասնելով մարդկային տիպարին, յանկարծակի երեւան եկեր է բանաւոր աննիւթ և անմահ հոգի մը. վերջապէս աս իմաստուն մարդն անմիջական անցքն է այդ, որուն ստեղծումը ի ժամանակի՝ կը համապատասխանէ ճիշդ այդ անցքին: Եւ վասն զի այս խնդիրն աստուածաբանից և բնագիտաց, մասնագիտութիւնն է, նախ և առաջ կ'ուզենք փնտռել՝ թէ այս երկու զասակարգութիւններէն որուն կը պատկանի Ֆոկացցարոյ, որ խաւիւր մէջ արդի պաշտպանն է այսպիսի գաղափարի: Աստուածաբանական տեսակէտը թողով աստուածաբանից, իբրև բնագետ կ'երևի թէ երկչոտ փախուստ սուտղ մ'է Ֆոկացցարոյ, նման անոր որ կրօնացուցած ըլլայ ամեն յոյս կուտելու, և որ համարի թէ գիտութեան փաստերն իրեն վրայ յաղթանակ կը կանգնեն: Արդեօք մենք ևս նոյն վիճակի մէջ ենք՝ փախուստներ նախելու և ենթադրութիւններ բազմացնելու յաղթական գիտնական վարդապետութեան առջև: Ո՞չ այս միջոցներուն գիմելէն առաջ կը սպասենք. Ա, որ յեղաշրջական ենթադրութիւնն ազատի իրեն դէմ եղած առարկութիւններէն՝ մինչ կենդանեաց կ'ուզեն յարմարքներ զայն, և այս նկատմամբ ըլլայ այս ենթադրութիւն՝ ազացուցեալ մշտնադատութիւն. — Բ. արամբանօրէն ազացուցուի, որ հետեւաբար կրնայ այդ դրութիւնն յարմարի մարդկային տեսակի ալ, որ ինչպէս վերագոյն ըսինք, ըստ արդի իսկ բնագիտաց, առանձին զատ յայլ կենդանեաց՝ մարդկային թաղաւորութիւն կը կազմէ. — Գ. ստուգեալ և անգիմարելի իրողութիւնք ազացուցանելու են իրապէս մարդու սերին յանբան տեսակաց:

Գ. Եթէ այս երեք պայմանները կատարուին, այն ատեն միայն պարտաւորեալ ենք յաղթուած համարելու զմեզ, և նաբքնի փնտռելու մեր կրօնական վարդապետութիւնքը ազատելու: Ինչպէս ամենայն ոք կը տեսնէ,

առանց կէտաչափ մը հեռանալու սոսկ մտքէ, լիովին նահապետ ևս յեղաշրջման ենթադրութեան՝ մարդուս նկատմամբ. եթէ այն մեր նաւասոց համաձայն ըլլայ, և եթէ, ոչ: Իսկ գալով յանբանից սերեալ և կատարելագործեալ մարմնոյ մէջ մարդկային հոգւոյ ըստեղծման, գիտնականք շատ և ծանր պատճառներ այս ենթադրութեան դէմ կը բերեն: (C. Fabani, I sette giorni della Creazione, ossia Scienza e Bibbia. Varese 1896, էջ 398): Եւ Ֆոկացցարոյ իւր այս կարծեօքը կը ջանայ տարվիականաց գիտութիւնը մեզի համաձայնեցնել, բայց նիւթապաշտ բնաբանք, որք ամեն ջանք կ'ընեն ըզդէն՝ գործողութեանց ո՞ր և է հոգեկան տարր զուրս վանելու, ինչպէս պիտի համաձայնին մեզի: Եւ եթէ միանգամ շնորհելու, զի՞տանելու սանուն տեղոյն վրայ զնենք ոտքերնիս՝ ո՞ր պիտի հասնինք: Սակայն ցաւօք դիտել կու

տանք, որ Ֆոկացցարոյէ այս առաջարկը նոյն իսկ նիւթապաշտ զժկամակը և ազեղ կերպով մերժեցին, (որք թուի թէ աւելի իրեն երախտագէտ պիտի ըլլային), վասն զի նա կը ջանայ նաւասոցից հոգիները ձգել ի գիտութիւն:

Դ. Այս համառօտ բացատրութիւնս տարվիականութեան պայծառ կը ցուցնէ թէ՛ և ոչ իսկ պաշտպանք վարդապետութեանն են համաձայնք իրարու, վասն զի է կարծիք, է եմթաղրութիւն, ուստի չունին իրաւունք պահանջելու յանուն գիտութեան (որ զայն դեռ իւր ազացուցեալ ճշմարտութեանց բանսին մէջ չէ կրցած անցնել), որ ամենայն ոք ընդունի զայն: Կարծեաց ազատութեան պաշտպանք են մեր նահապետիցք, սակայն կ'ուզեն այլոց ազատութեան իրաւունքը յափշտակել. — Ինչպիսի նահապետութիւն:



3693

25

2013

« Ազգային գրադարան »



NL0070216

